

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԻՐԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԸ ՀԱՄԱՐԵՆ ՍՈՒՐԻՈՅ ՏԱԳՆԱԴԻՆ ԲԱՐԱԲԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՅԱՆԳԻԸ

Երեքշաբթի, 15 Մարտ 2022-ին, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգեյ Լավրով Մոսկուայի մէջ իր իրանցի պաշտօնակից Զուլեյն Էմիր Ապտուլլահեանի հետ ունեցած միացեալ մամլոյ ասուլիսին ընթացքին անհրաժեշտ համարեց Սուրիոյ տագնապին քաղաքական լուծման յանգիլը: Ան Ռուսիոյ պատրաստակամութիւնը յայտնեց Սուրիոյ մէջ տնտեսական եւ մարդասիրական իրավիճակի բարելաման գծով միջոցներ որդեգրելու: Իր կարգին Ապտուլլահեան ըսաւ.



«Լավրովի հետ խորհրդակցեցանք Սուրիոյ տագնապին քաղաքական լուծման միջոցներուն շուրջ, Ասթանայի բանակցութիւններու լոյսին տակ», շեշտելով Սուրիոյ ժողովուրդին աջակցութիւն տրամադրելու անհրաժեշտութիւնը, մասամբ մեղմացնելու տնտեսական պատժամիջոցներուն բացասական հետեւանքները:

ԼԱՐՈՎ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՎՈՐԴԻՆ ՏՐԱՄԱՐՈՒՄԸ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆՂԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲԱԶՄԱԴԱՏԿԵԼՈՒ ԿՈՉ Կ՛ՈՒՂԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ

Չորեքշաբթի, 16 Մարտ 2022-ին, «Ուաթան Անլայն» հաղորդեց, որ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգեյ Լավրով Մոսկուայի մէջ իր քաղաքացի պաշտօնակիցին հետ ունեցած միացեալ մամլոյ ասուլիսին ընթացքին անհրաժեշտ համարեց միջազգային հանրութեան կողմէ Սուրիոյ ժողովուրդին տրամադրուած մարդասիրական օժանդակութիւններու բազմապատկումը, որուն կողքին երկրի տնտեսական իրավիճակի բարելաման առնչուող ծրագիրներու գործնականացման միջոցներու հայթայթումը:



Լավրով շեշտեց Սուրիոյ տագնապի քաղաքական լուծման կարելորութիւնը՝ ՄԱԿ-ի 2254 թուակիր որոշումին համաձայն: Ան վերահաստատեց, որ մարդասիրական օժանդակութիւնները պէտք է հեռու մնան քաղաքականացումէ եւ արդարօրէն բաշխուին: Լավրով ակեցուց, որ Մոսկուայի եւ Անթալիոյ մէջ Սուրիոյ ՄԱԿ-ի բանագնաց Կիր Պետրսընի հետ վերջին գոյգ հանդիպումներուն շեշտուած է ժնեւի մէջ սուրիական սահմանադրութիւնը քննարկող յանձնախումբի աշխատանքներուն խթանումը՝ առանց արտաքին միջամտութիւններու:

ՎԱԶԱԳՆ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ ՍՏԱՆՁՆԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՎԱԶԻ ԴԱՇՏՕՆԸ

Կիրակի, 13 Մարտին Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի յատուկ նիստի ընթացքին Վահագն Խաչատուրեանը երդումով ստանձնեց Հանրապետութեան նախագահի պաշտօնը:



«Արմէնփրէս»-ի հաղորդումով՝ Հայաստանի Հանրապետութեան 5-րդ նախագահ Վահագն Խաչատուրեանի երդման համար Ազգային Ժողովի յատուկ նիստը տեղի ունեցած է Կարէն Տեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ: Նիստը կը վարէր Ազգային Ժողովի նախագահի լիազօրութիւնները կատարող Ազգային Ժողո-

Շար.՝ 1ք 3 >

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մեկնելով ներկայիս Արցախի դիմագրաւած ճգնաժամային կացութենէն, ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինը հրապարակեց հետեւեալ յայտարարութիւնը:

Արցախի Հանրապետութիւնում խաղաղ բնակչութեան նկատմամբ ատրպէյճանական շարունակական սադրանքները ստեղծել են անվտանգութեան եւ մարդկային իրավիճակի նոր սպառնալիքներ:



Ատրպէյճանի բռնազրաւող զօրքերը դիտարկութեամբ վնասած են Հայաստանից Արցախի Հանրապետութիւն մտնող կազատարը, խոչընդոտում են կազատարի վերանորոգման աշխատանքներին, տեւական ժամանակ է, ինչ արցախցիներին զրկել են կազախի: Կազատարի չգործելու պատճառով խնդիրներ են առաջացել նաեւ ուժանիւթի մատակարարման համակարգում: Բնականոն քաղաքացիական կեանքն Արցախում կաթուածահար վիճակի մէջ է, եւ մարդիկ կանգնած են մարդկային աղէտի շեմին:

Միաժամանակ, վերջին օրերի ընթացքում յաճախակի եւ պարբերական բռնուցքներ են ստացել միջին եւ խոշոր տրամաչափի գինատեսակներով Արցախի խաղաղ բնակավայրերի հրետակոծումներն ու սադրիչ գործողութիւնները:

Անկայտ է, որ, օգտուելով առիթից, Ատրպէյճանը հետեւողականօրէն փորձում է ամեն կերպ հեղինակազրկել ռուսական խաղաղապահ առաքելութիւնը եւ հասնել Արցախի հայաթափմանը:

Կտրուկ մերժելի համարելով Հայաստանի իշխանութիւնների ցուցաբերած անգործութիւնն ատրպէյճանական յանցաւոր այս վարքագծի նկատմամբ, անընդունելի համարելով միջազգային հանրութեան կրաւորական կեցուածքը փաստեմք, որ համապատասխան արձագանգի բացակայութիւնը քաջալերում է Ատրպէյճանի կողմից Արցախի հայաթափմանն ուղղուած քաղաքականութիւնը եւ խրախուսում Արցախի Հանրապետութեան վրայ ռազմաքաղաքական ճնշման սաստկացումը:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
 Շար.՝ 1ք 3 >

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱՎԱԶ ՎԱԶԱԳՆ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆԸ

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանի երդմանակալութեան առիթով Արամ Ա. Վեհափառ Հայրապետը շնորհաւորական հետեւեալ նամակը յղեց նորընտիր նախագահին.



«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքէն քրիստոնէական ջերմ սիրով ու հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ, եւ ջերմօրէն կը շնորհաւորենք ձեր ընտրութիւնը՝ իբրեւ նախագահ Հայաստանի Հանրապետութեան:

Համաշխարհային բազմազան ու այլազան տագնապներով յղի այս օրերուն, մեր հայրենիքը իր կարգին կը դիմագրաւէ ներքին խոր մտահոգութիւններ, եւ ենթակայ է շրջանային թէ միջազգային աշխարհաքաղաքական իրադարձութիւններու ազդեցութեան: Արցախի պատերազմին յառաջացուցած ծանր հետեւանքները տակաւին կը մնան անլոյծ ու Արցախի ապագան անորոշ:

Արդարեւ, ներկայ ճգնաժամային շրջանին ձեր պատասխանատու-

Շար.՝ 1ք 3 >

Խմբագրական

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԽԱՐԴԱՒԱՆՔԸ՝ ՌՈՒՄ-ՈՒՔՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Ատրպեյճան հայկական Արցախի տարածքները բռնագրավել է, անոր մշակութային կոթողները աղաւաղել է ետք, աստիճանաբար կը ջանայ իրականացնել Արցախը հայաթափելու իր ռազմավարական հեռահար ծրագիրը: Ան մերթ կը սպառնայ արցախցիներուն՝ խախտելով զինադադարը, մերթ հոգեբանական ճնշում կը բանեցնէ անոնց վրայ՝ սպառնալով զորօրինակ Խրամորթ գիւղի բնակչութեան՝ լքելու իրենց բնակավայրը, մերթ կենցաղային դժուարութիւններ կը յառաջացնէ, այնպէս ինչպէս յառաջացուց 8 Մարտին՝ վնասելով Յայաստանէն Արցախ մտնող, Շուշիի մօտակայքը գտնուող կազատար խողովակաշարը, որուն հետեւանքով Արցախի Յանրապետութեան տարածքին դադրեցաւ կազամատակարարումը:

Արցախեան պատերազմի եւ յետպատերազմեան զարգացումները ցոյց կու տան, որ ատրպեյճանական կողմն ու Թուրքիան, օգտուելով աշխարհաքաղաքական ներկայ զարգացումներէն, յատկապէս ռուս-ուքրանական պատերազմէն, Յայաստանի հետ իրենց յարաբերութիւնները բարելաւելու պիտակին տակ միասնաբար կը համադրեն Յայաստանին պարտադրելի նախապայմանները՝ իւրաքանչիւրը իր դիւանագիտութեան քողին տակ:

Վերջին շաբթուան Արցախի իրավիճակի սրումն ու Ատրպեյճանի դիւանագիտական աշխուժացումը յստակ վկաներն են այս խարդաւանքին:

Մէկ Կողմէ Թուրքիան, իբրեւ թէ առանց նախապայմաններու, դիւանագիտական յարաբերութիւններ կը փորձէ վերսկսիլ Յայաստանի հետ, միւս կողմէ Ատրպեյճան Յայաստանի հետ ճանապարհներու ապաշրջափակման խաղաղասիրական տրամաբանութեան պիտակին տակ կը ջանայ Յայաստանին պարտադրել սահմաններու փոխադարձ ճանաչում, սահմանազատում եւ արցախեան հարցի վերջնական փակում: Այլ խօսքով երկու երկիրները Յայաստանը ապահովական եւ տնտեսական իրենց լծակներուն մէջ առնելու եւ համադրաբար նախապայմաններ պարտադրելու աշխատանքին լծուած են:

Յայաստան կանգնած է թուրք-ատրպեյճանական խաղաղասիրական պիտակին տակ թաքնուած մէկէ աւելի լծակներ դիմադրելու վտանգին դէմ յանդիման:

Պաքուն իր նախապայմաններով կը փորձէ մատրիտեան սկզբունքները փոխարինել իր պարտադրած սկզբունքներով՝ վերջնականապէս մոռացութեան տալու Արցախի ժողովուրդի ազգային ինքնորոշման իրաւունքը:

Յայաստան իր կարգին կը յայտարարէ, որ պիտի դիմէ ԵԱՀԿ Մինսքի խումբի միջնորդութեան Ատրպեյճան-Յայաստան խաղաղասիրական բանակցութիւններու ընթացքին:

Թուրք-ատրպեյճանական համադրուած ճնշումներուն դէմ, կովկասեան տարածաշրջանի ներկայ զարգացումներուն լոյսին տակ, Յայաստան իր աշխարհագրական դիրքին օգտագործումով աշխոյժ եւ զգուշաւոր դիւանագիտութիւն վարելու հրամայականին առջեւ կանգնած է:

«Գ.»

-Սուրիոյ Ներքին գործոց Նախարարութեան երթելուութեան տնօրէնութիւնը յայտնեց, որ Սուրիոյ մէջ կլիմայի կտրուկ փոփոխութեան եւ ձիւնի կուտակման հետեւանքով Դամասկոսի, Յոմսի, Լաթաքիոյ, Թարթուսի, Յամայի, Զունեյթրայի եւ Սուլեյտայի նահանգներուն միջեւ երթելուութիւնը նախորդ օրերուն դադրած էր: Տնօրէնութիւնը զգուշացուց քաղաքացիները այս օրերուն ճամբորդութեան նախաձեռնել:



-Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտնեց, որ Զորեքշաբթի, 16 Մարտին, պատկաճեւ ժահրով վարակուած են 32 քաղաքացիներ, ապաքինած են՝ 90 վարակուածներ, մահացած է մէկ վարակակիր:

Այս տուեալներով, Սուրիոյ մէջ մինչեւ օրս վարակուած քաղաքացիներուն թիւը հասած է 55431-ի, որոնցմէ ապաքինած են 50181 վարակակիրներ, մահացած՝ 3118:

-Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութիւնը իրապարակեց հաղորդագրութիւն մը՝ դատապարտելով արեւմտեան երկիրներու Սուրիոյ ներքին հարցերուն միջամտութիւնը: Նախարարութիւնը շեշտեց, որ արեւմտեան երկիրներն ու ԱՄՆ-ը չյաջողեցան պառակտել Սուրիոյ ժողովուրդը, հակառակ իրենց շարունակուող ճիգերուն: Ապա յայտնեց, որ այդ ուժերը այսօր կը թալանեն Սուրիոյ հարստութիւններն ու կը փորձեն իրենց լծակները օգտագործելով Սուրիոյ տարածքային ամբողջականութեան սպառնալ: Նախարարութիւնը շեշտեց, որ Սուրիան ու անոր քաջարի բանակը դէմ պիտի դնեն բոլոր խարդաւանքներուն պահպանելու երկրի տարածքային ամբողջականութիւնն ու ժողովուրդին միասնականութիւնը:



- Երկուշաբթի, 14 Մարտ 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար դոկտ. Պաշշար ալ Ճաաֆարի Նորվեկիոյ եկեղեցական նպաստից կազմակերպութեան քարտուղար Տակվըն Յոպրաթինի հետ խորհրդակցեցաւ Սուրիոյ մէջ կազմակերպութեան յառաջիկայ ծրագիրներուն շուրջ: Ճաաֆարի շեշտեց, որ կազմակերպութիւնը կարելի էր ունի տնտեսական պատժամիջոցներուն լոյսին տակ սուրիացիներուն տագնապը մեղմացնելու գծով, յատկապէս, որ ան ականատես դարձաւ եւ ժողովուրդին անմխթար վիճակին: Ճաաֆարի կարելի էր համարեց կազմակերպութեան եւ Ջրային Պաշարներու Նախարարութեան միջեւ փոխըմբռնման պայմանագրի ստորագրումը՝ Սուրիոյ մէջ նման հարցերու վերաբերող ծրագիրներ վերաշխուժացնելու համար:



Ճաաֆարի կազմակերպութեան ներկայացուցիչին առաջարկեց գործակցիլ սուրիական «Ամանա» բարգաւաճման կազմակերպութեան հետ՝ 2022-ի ծրագրուած աշխատանքները միասնաբար իրականացնելու համար:

Իր կարգին քարտուղարը ներկայացուց Սուրիոյ մէջ իրականացած եւ իրականանալի ծրագիրները՝ ջուրի մատակարարման եւ այլ ոլորտներու մէջ, շնորհակալութիւն յայտնելով Սուրիոյ՝ կազմակերպութեան աշխատանքներուն տրամադրած արտօնութեան համար: Ան շեշտեց, որ տնտեսական պատժամիջոցները բացասական ազդեցութիւն ունին Սուրիոյ ժողովուրդին առօրեային վրայ, յայտնելով, որ կազմակերպութիւնը իր կարելի ի գործ պիտի դնէ ժողովուրդին տագնապը մեղմացնելու համար:

Լուրեր Հայաշխարհին

ՄԻՐՉՈՅԵԱՆ. «ԱՏՐՊԵՅԱՆԻ ՇԵՏ ԽԱՂՊՈՒԹԵԱՆ ԴԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՈՒՐՁ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԵՏԷ Ե ԸՆԹԱՆԱՆ ԱՌԱՆՅՆ ԱՄԽԱՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ»

Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան «Արմենփրես»-ի հետ զրոյցի մը ընթացքին, անդրադառնալով Պաքուի հրապարակած 5 կետերէ բաղկացած առաջարկներուն, ըսած է, որ Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագրութեան շուրջ բանակցութիւնները պետք է ընթանան առանց նախապայմաններու:

Միրզոյեան նկատել տուած է, որ Պաքուի առաջարկած կետերը ամբողջութեամբ չեն արտացոլեր առկայ հարցերու ամբողջ օրակարգը:

Պաքուն, մասնաւորապէս, կ'առաջարկէ ճանչնալ միմեանց հողային ամբողջականութիւնը, իրար տարածքային պահանջներ չներկայացնել, սահմանազատում իրականացնել, դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել եւ բանալ փոխադրական ուղիները:

«Ինչ կը վերաբերի բուն առաջարկներուն, ապա երկու երկիրները, ըստ էութեան, տակաւին 8 Դեկտեմբեր 1991-ին համատեղ ստորագրելով «Անկախ պետութիւններու համագործակցութեան ստեղծման մասին» համաձայնագիրը, արդէն իսկ ճանչցած են իրար տարածքային ամբողջականութիւնը եւ ընդունած են, որ չունին իրար նկատմամբ տարածքային պահանջներ», ըսած է արտաքին գործոց նախարարը:

Միւս կողմէ, Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարած է, որ Ատրպէյճանի դիրքորոշումը Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման հարցին մէջ յստակ է եւ հետեւողական:

«Մենք անհրաժեշտ չենք նկատեր կրկնել այն դիրքորոշումը, որ բազմիցս յայտարարած ենք», յայտարարած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարի հարցազրոյցին, ուր վերջինս ներկայացուցած էր Ատրպէյճանի կողմէ ներկայացուած հինգ առաջարկներուն վերաբերեալ Երեւանի դիրքորոշումը:

«Եթէ Հայաստանը նոյնպէս լրջօրէն կը վերաբերի այս հարցին, ապա պետք է ներկայացնէ իր որոշակի առաջարկները եւ աստով իսկ դրսեւորէ իր պատրաստակամութիւնը՝ սկսելու առարկայական եւ արդիւնքին միտուած բանակցութիւններ», յիշուած է Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:



ՄԵՆԷ ԴԵՏԷ Ե ՀԱՍՏԱՏԵՆԷ, ՈՐ ԱՐՅԱՆԻ ՀԱՐՅՈՒ ԳԵՐՈՒՄ

9-11 Մարտին Արցախ կը գտնուէր ՀՀ Դատի Եւրոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեան՝ ՀՀ Զուսմաստանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Հրաչիսիմէ Յարութիւնեանի՝ ՀՀ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական գրասենեակի յատուկ ծրագիրներու պատասխանատու Գեորգ Դուկասեանի ուղեկցութեամբ:

«Բաւական երկար ատենէ ի վեր Արցախ չէի այցելած, եկայ, որպէսզի տեղւոյն վրայ տեսնեմ կացութիւնը, խորհրդակցութիւններ ունենամ պետական պատասխանատուներու հետ, Արցախին օգտակար ըլլալու նոր կարելիութիւններ քննարկենք: Գոհ եմ այցելութենէս, որովհետեւ իմացայ բաներ, որոնք առանց այստեղ գալու կարելի չէր իմանալ: Անկեղծ խօսակցութիւն ունեցայ բոլորին հետ», «Ապառաժ»-ի հետ զրոյցին ընթացքին ըսած է Գասպար Կարապետեան:



Գասպար Կարապետեան նախ խօսած է 10 Մարտին Եւրոպական խորհրդարանի (ԵԽ) հրատապ ընթացակարգով եւ ճնշող մեծամասնութեամբ Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգութեան ոչնչացման վերաբերեալ բանաձեւի ընդունման մասին: Ան շեշտած է, որ վերջին ամիսներուն Եւրոպատգամաւորներու հետ տարուող անդադրում եւ նպատակաւոր դուրսէն իրագրուած իրագրուած աշխատանքը թէ՛ Պրիքսէլի ՀՀ դեսպանատան, թէ՛ Հայ Դատի Եւրոպայի գրասենեակին կողմէ տուին իրենց արդիւնքը: Անոր նպաստեց նաեւ Արցախի արտագործնախարար Դաւիթ Բաբայեանի այցելութիւնը Պրիքսէլ:

«Եւրոպական խորհրդարանը խստօրէն կը դատապարտէ Ատրպէյճանի մէջ պետական մակարդակով տարուող հայատեաց քաղաքականութիւնը: Սա կարելի լծակ է Ատրպէյճանի վրայ ճնշում բանեցնելու եւ այդ երկրին բարբարոսական քաղաքականութեան մասին խօսելու համար», ըսած է Գասպար Կարապետեան:

«Մենք պետք է ցոյց տանք, թէ այնքան ատեն, որ Արցախի հարցը չէ լուծուած, իսկ լուծում ըսելով նկատի ունիմ Արցախի ժողովուրդին ազատ ինքնորոշման իրաւունքին յարգումը, այս կացութիւնը պիտի շարունակուի: Այսօր Ատրպէյճանի հաւակնութիւն ունի՝ մտածելու, թէ Արցախի հարցը փակուած է: Իրականութիւնը այդպէս չէ», ակնարկեց Գ. Կարապետեան: Ան համաձայն չէ այն կարծիքին, որ Մայր հայրենիքը ձեռքբերելու մտաբանութեամբ Արցախը մեր անբաժանելի մասն է, եթէ ան հայաթափուի, Միւս կողմէ ու այնուհետեւ Հայաստանը ամբողջութեամբ եթէ չհայաթափուի անգամ, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ձեռքին խաղաքարտ պիտի դառնայ: Ահա թէ ինչո՞ւ համար շատ կարեւոր է երկու հանրապետութիւններու՝ ՀՀ եւ ԱՀ ղեկավարներու, գերատեսչութիւններու սերտ գործակցութիւնը, միահամուռ աշխատանքը», եզրափակած է ան:

ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 1

ՀՀ Գերագոյն Սարմինը, զօրակցութիւն յայտնելով Արցախի Հանրապետութեանն ու Արցախի ժողովրդին, ուղերձ է յղում՝

1. Միջազգային մարդասիրական կազմակերպութիւններին եւ օտարերկրեայ պետութիւններին՝ դատապարտել Ատրպէյճանի կողմից իրականացուող ցեղային զտման քաղաքականութիւնը եւ ճնշում բանեցնել Ատրպէյճանի կառավարութեան վրայ՝ վերջ տալու Արցախի խաղաղ բնակչութեան դէմ կիրառուող ահաբեկչական գործելակերպին,

2. Սփիւռքի հայկական կազմակերպութիւններին, մեր հայրենակիցներին, Արցախի բարեկամների «Փոքր Արցախ» միջազգային ցանցի մասնակիցներին, բարի կամքի տեր անձանց՝ դիմել իրենց կառավարութիւններին՝ պահանջելով Ատրպէյճանից՝ դադարեցնել խաղաղ բնակչութեան դէմ թշնամական գործողութիւնները:

Այս ծանրագոյն պայմաններում.

1. Հայաստանի կառավարութիւնը պարտաւոր է գործուն քայլեր ձեռնարկել Արցախի բնակչութեան անվտանգութեան երաշխաւորի՝ իր ստանձնած յանձնառութիւնն իւրացնելու համար,

2. Ազգային ժողովը պետք է անյապաղ հրաւիրի Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովների միջխորհրդարանական յանձնաժողովի նիստ՝ Արցախում ստեղծուած մարդասիրական ճգնաժամի եւ ռազմաքաղաքական իրավիճակի յաղթահարման ուղղութեամբ գործնական քայլեր քննարկելու եւ ձեռնարկելու համար:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ...

Սկիզբ՝ էջ 1

Թիւնը՝ իբրեւ նախագահ, ձեզ կը դնէ լուրջ մարտահրաւերներու դիմաց: Մեր յոյսն է ու սպասումը միանգամայն, որ կարենաք խոհեմութեամբ ու քաջութեամբ դիմագրաւել բոլոր դժուարութիւնները՝ մեր հայրենիքը հեռու պահելով ներքին բեւեռացումներէ, ամրապնդելով մեր ժողովուրդին միասնականութիւնը, ամուր հիմքեր վրայ դնելով Հայաստանի հողային ամբողջականութիւնը, անվտանգութիւնն ու անկախութիւնը եւ միշտ հետապնդելով համազգային շահերը, ինչպէս խոստացաք կատարել այս առաւօտ ձեր երդման արարողութեան ընթացքին:

Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ անձնապէս կը վստահեցնենք ձեզ, որ մեր սուրբ աթոռը պիտի շարունակէ զօրավիգ կանգնել Հայաստանի պետութեան

ամրացման, Հայաստան-Սփիւռք գործակցութեան առաւել ծաւալման, եւ մեր ազգի ու հայրենիքի գերագոյն եւ ընդհանրական շահերու հետապնդման ու իր ձեռքով իրագործման նպատակով ծրագիրներուն ու աշխատանքներուն:

Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ ձեզի շնորհէ քաջառոյցութիւն եւ իմաստութիւն, որպէսզի ձեր նախագահութեան ներքեւ մեր հայրենիքը ապրի խաղաղ ու բարգաւաճ տարիներ: Թող Աստուած պահէ ու պահպանէ մեր սիրելի ժողովուրդը ամեն տեսակ չարի ու չարիքէ՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի»:

ՎԱՅԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Վի փոխնախագահ Յակոբ Արշակեան: Ազգային ժողովի յատուկ նիստին Վահագն Խաչատուրեանը, ձեռքը դնելով Վեհաժող Աւետարանին եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան վրայ, երդումը կատարեց:

Երդմանակալութենէն ետք ինչեք Հայաստանի Հանրապետութեան քայլերգը, Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը հայրապետական օրհնութեան խօսք արտասանեց:

Արարողութեան կը մասնակցէին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, նախագահի լիազօրութիւնները մինչեւ այդ թուականը կատարող Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը, նախարարներ, Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանը, այլ պաշտօնատար անձեր: Ընդդիմադիր խմբակցութիւններու պատգամաւորները չէին մասնակցած յատուկ նիստին:

Նախագահի պաշտօնին Խաչատուրեանի թեկնածութիւնը առաջադրած էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցութիւնը: Հայաստանի Ազգային ժողովը Վահագն Խաչատուրեանը հանրապետութեան նախագահ ընտրած էր 3 Մարտի նիստին: Վահագն Խաչատուրեանը Հանրապետութեան նախագահ ընտրուած է 7 տարուան ժամկետով:

ՆՇԱՐ

ՅՆԾԱ՛ ԵՒ ՀՊԱՐՏԱՅԻՐ, Ո՛Վ ՀԱՅ



Ս. Մահսեդեան

Յնծա՛, հա՛յ ժողովուրդ, քանզի կ՛ապրիս պատմական, հպարտա- ռիթ օրեր:

Ուրախացի՛ր, որովհետեւ Հայաստանի իշխանությունը անգերագան- ցելի հայրենասիրությամբ՝ կռնկակոխ կը հետապնդէ թուրքիոյ եւ Ատրպեյ- ճանի հետ խաղաղութեան շրջանի բացման ծրագիրները, ի՛նչ հոգ, որ թշնամական արարքները կը շարունակուին (որ՛ն ալ կոյր ձեւացիր): Ինչո՞ւ չհրճուիլ, երբ իշխանութեան յառաջապահ շարքերը կը համալրուին (կրա- տրական) նոր խաղաղասերներով:

Բազում են հպարտութեան եւ ցնծութեան պատճառներդ: Եթէ բոլորը թուեց, այս սիւնակը բաւարար պիտի չըլլայ, ուրեմն մօտենանք ընտրովի:

Սկսելու համար: Տե՛ս, արտաքին գործոց նախարարը ինչպիսի՛ փայ- լուն ժպիտով բռնեց եւ թօթուեց ցեղասպաններու ժառանգորդ իր պաշտօ- նակիցին ձեռքը (եթէ քիչ մը մօտէն նայէր, արեան հեղեղներ պիտի տեսներ հոն)՝ Անթալիայի մէջ «մուկերու ժողով»ին առիթով, աւետեց, որ թուրքիոյ հետ բանակցութիւնը «արդիւնաւոր է, անոր հետ խաղաղութիւն պիտի հաս- տատենք»: Անոր հեռատես աչքերը կը տես- նեն հասարակ մահկանացու հայուն չտե- սածը, թէ՛ «շրջանի բոլոր երկիրները խա- ղաղութիւն կը ցանկան» (ի մտի ունի նա՛ն թուրքիան եւ Ատրպեյճանը): Սակայն թուրքիան է, որ հազիւ մէկ ու կէս տարի առաջ, ջլապիւնդ օգնութեան հասաւ Ատրպեյճանին, «Պայրաքտար»ներ եւ ահաբե- կիչներ արծակեց Արցախը պաշտպանող մեր քաջամարտիկներուն դէմ, զինուորական խորհրդականներով գրաւեց ազերիական բանակի հրամանատարութիւնը, Կարսէն հեռավար ուղղոր- դեց հակահայ մարտերը...: Սա այն թուրքիան է, որ քանի մը ամիս առաջ Ատրպեյճանի հետ կնքեց «Շուշիի համաձայնագիր»-ը, բանիւ եւ գործով լծուած է Արցախի մնացեալ բաժինն ալ կող տալու «ճաշկերոյթ»-ին, Հայաս- տանին կը սպանայ, թէ՛ «Եթէ խաղաղութեամբ չհամաձայնիր շանգեու- ռի անցքը տալու, գայն ուժով կը խլենք», ինչպէս ըրաւ Արցախի 75 առ հարիւրը Ատրպեյճանի ձեռքով գրաւելու օրերուն: Սա նո՛յն թուրքիան է, որ իր օրհնութիւնը տուած է Ատրպեյճանի նուաճողական ծրագիրներուն, որ- պէսզի ազերիական տիրապետութիւնը տարածուի մինչեւ Սեւան ու Երե- ւան (կատակ սեպէ Երեւանի մզկիթին հարցը), լաւագոյն պարագային՝ շուրջ 10-12 հազար քառ. քմ. տարածութեամբ Հայաստան մը շնորհելու հայութեան, այն ալ՝ իրենց քաղաքական եւ տնտեսական «հովանոցին» տակ:



Ուրախացի՛ր, ո՛վ հայ, եւ տե՛ս, թէ ինչպիսի՛ կառուցողականութիւն ունի թուրքիան, այն թուրքիան, որ աւելի քան դար մը առաջ, իբրեւ պե- տական ծրագիր՝ իրագործեց Ցեղասպանութիւնը եւ հիմա, բացայայտօ- ռէն կ'ընէ Հայաստանին ու հայութեան, որ պետք է մոռնալ պատմական ոճիրը, մոռնալ հատուցման հարցը, մոռնալ Արցախն ու Նախիջեւանը, այք փակել Սիւնիքի գրաւման ծրագիրին վրայ, «առանց նախապայմանի» բա- նակցութեան նստիլ եւ խաղաղութեան էջը բանալ: Ան Երեւանէն «դրական նշաններ» կը տեսնէ, որովհետեւ, ի շարս այլ «ծիթենիի ճիւղերու», վարչա- պետը կը յայտարարէ, թէ Ցեղասպանութեան հետապնդումը Հայաստանի հարցը չէ, այլ Սփիւռքի (որուն երկփեղկման եւ պառակտման բացայայտ եւ քողարկեալ ծրագիրները օրէ օր նուաճումներ կ'արձանագրեն):

Հպարտացի՛ր, ո՛վ հայ, քանզի վարչապետդ ժամանակ չունի մեկնա- բանելու Արցախի վրայ ազերիական յարածուն թշնամանքները՝ կրակոց, հրթիռարձակում, սահմանամերձ բնակավայրերու բնակիչներուն գաղթի կոչեր, Արցախը կազմով մատակարարող խողովակի պայթեցում (եւ նորո- գութեան արգիլում), եւ մասամբ նորին, իսկ անոր մէկ սերտ լծակիցը՝ պաշտ- պանութեան յանձնաժողովի նախագահը քաջաբար կը յայտարարէ, թէ պետք է քննութիւն բանալ եւ պատժել յանցաւորները, ստուգել, թէ ազերի- ական, թէ՞ հայկական կողմէն եղած են յանցագործ խախտումները...: Ազե- ռիական «խաղաղասիրութեան» բազում փաստերու դիմաց, վարչապետը ունի լակոնական կեցուածք մը. «Չեն նախընտրեր մեկնաբանել ազերիներ- ռու արարքները»:

Ուրախացի՛ր եւ հպարտ գգա՛, ո՛վ հայ, որովհետեւ վարչապետը եւ գործակիցները ամէն օր իրենց ձեռքերը կը լուան, քիչ մը աւելի կը հականե- խեն Արցախի «բռն»-էն, արտաքին գործոց նախարարը վազքի հանած են խաղաղութեան համաձայնագիր մը մուրալու նա՛ն Ատրպեյճանէն, որ մօ- տաւորապէս 10 ամիսէ ի վեր «խաղաղութեան բարիքները» բերած է Հա- յաստան՝ սահմանային տարածքներ եւ շնչերակ ճամբաներ գրաւելով, «Չան- գեղուրը ուշ կամ կանուխ պիտի գրաւենք» սպանալիքներով: Թող աչքերդ փայլին, հայորդի՛, որովհետեւ վարչապետը եւ իր խմբակիցները կ'ըն- դունին, որ անվիճելիօրէն հայկական հողամասեր «ազերիական են», Ար- ցախի հարցին լուծումը չեն տեսներ Ատրպեյճանի սահմաններէն դուրս, իրօ- դապէս ոտնատակ կ'ընեն եւ «գրոյական կէտ»-ի կը վերադարձնեն Միւսքի

խումբին գործը, գործնապէս ըսելով, որ տխմար մանկամիտներ եւ քա- ղաքական տգէտներ էին բոլոր անոնք, որոնք շրթայագ երծեցին Արցախ- եան ազատամարտը, բիր-բիր արիւնք նահատակինկան, Եռաբլուրը տարուէ տարի նոր տարածքներ գրաւեց՝ որպէսզի Արցախի հայկականութիւնը պահպանուի: Իսկ իբրեւ պատասխան՝ իր «մեկնաբանել էտ կանգնելու» իմաստո՛ւն եւ վեհանձն կեցուածքին, Ատրպեյճանէն նոր պահանջներու ցանկ մը հասած է Երեւան, ցանկ՝ որմէ պատահիկներ սպորդած են մամուլին, որովհետեւ նոյն վարչապետը կը շարունակէ ճակատաբաց եւ պնդագլուխ քալել գաղտնապահութեան ճամբէն, այնպէ՛ս՝ ինչպէս գաղտնաբար կնքեց 9 Նոյեմբերի համաձայնագիրը, այնպէ՛ս՝ ինչպէս ազերիներուն կողմէ չգրաւուած հողեր նուիրեց իր չյայտարարուած «եղբոր»: Թող ցնծութիւնդ անխա՛ռն ըլլայ, ո՛վ հայ, որովհետեւ ունիս վարչապետ մը եւ գործակից- ներ, որոնք գաղտնօրէն զիջումէ զիջում կ'երթան, նոր նահանջներու կը տանին արիւնով ու պայքարով շահուած մեր հայրենիքը: Չէ՞ որ դուն էիր ասոնց «երկաթէ մանտաթ» տուողը...

Եթէ այս բոլորը գագաթնակէտէ գագաթնակէտ չեն բարձրացներ ցնծութիւնդ, ահա նաեւ ցնծութեան նոր պատճառ մը: Կիրակի, 13 Մարտին, Հայաստան ունեցաւ նոր նախագահ մը, որ սահմանադրական երդում տուաւ եւ ստանձնեց իր պաշտօնը: Ան կը կրէ մեր դիւցազնական հերոսին՝ Վահագնի անունը, իսկ Խաչատրեան մականունը կը յիշեցնէ բազմաթիւ պայծառաճակատ հայեր: Յնծա՛, ո՛վ հայ, քանզի նախագահական պա- լատ կը մտնէ մարդ մը, որուն աչքին՝ Արցախի կամ Հայաստանի վրայ ազերիական յարձակումները, կրակոցները եւ թշնամական արարքները ո՛չ մէկ նշանակութիւն ունին. «Կը կրակեն, յետոյ ի՞նչ» է անոր «լրջախոս» պա- տասխանը: Ան ալ միացած է «խաղաղութիւն հետապնդողներու» բանա- կին, չի սիրեր տրտմութիւն պատճառել թուրքին ու ազերիին: Սահմանա- դրութեան եւ Եռագոյնին հաւատարմութիւն յայտնելէ առաջ, ան անտարա- կոյս հաւատարմութիւն յայտնած է իշխանապետին, առանց որուն օրհնութեան՝ չէր կրնար նման պաշտօն երազել (քիչ մը քաղաքավար մնանք. ի վերջոյ, մարդը նախագահ է. գայն չաւելցնենք «ուսապարկեր»ու ցանկին):

Ցնծութեան օրեր կ'ապրինք, հայեր: Մեր գլուխները բարձր բռնած՝ հետեւիք իշխանութիւններուն խաղաղասիրական քայլարշաւին, եւ որո՞ւ հոգը, թէ թուրքիա եւ Ատրպեյճան, խաղաղութիւն ըսելով, կը փորձեն ան- շեղօրէն իրականացնել համաթուրանական ծրագիրները, մեր կրաւորա- կան (չըսելու համար՝ անգործութիւն նախընտրող) դիւանագիտութեան դի- մաց, հազար ու մէկ լարախաղացութեամբ՝ ծփալ աշխարհի ու մեր շրջա- նի փոթորկոտ ծովերուն վրայ: Մեր իշխանութիւններուն համար, բացա- յայտ սկզբունք դարձած է անգլիական հետեւեալ խօսքը. «If you cannot beat them, join them», որ թարգմանի՝ «Եթէ հակառակորդներուդ չես կրնար յաղթել՝ միացի՛ր անոնց»: Խելամի՛տ, իմաստո՛ւն եւ փրկարար՝ վարքա- գիծ, որուն... աղետալի հետեւանքներ չտեսնելու համար, պետք է կոյր ըլլալ աչքով եւ մտքով:

...Իսկ եթէ անգլիական խօսքին մէջ օտարամտութիւն տեսնող ըլլայ, կրնանք նաեւ ըսել քրիստոնեակայել կերպով. «Թշնամիդ սիրէ անձի՞դ պէս», «Մէկ երեսդ ապտակողին՝ միւս երեսդ դարձո՛ւր», «Վերարկուդ ուզողին՝ բոլորդ գգեստներդ տուր», եթէ այդ ալ քիչ սեպեն՝ տո՛ւնդ ու արտե՛րդ, հայ- րենի՞քդ տուր (եւ թող պապանձի՛ն բոլոր այն լեզուները, որոնք այս իշխա- նաւորներուն մէջ կը տեսնեն քրիստոնեութենէն շեղած աղանդաւորներ, այ- լասերածներ, ազգաթողներ եւ անհայրենիքներ):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ


Սիսեռեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանին, Ազգ. Երեսփոխանական եւ Ազգ. Վարչութեան կազմերու անդամներուն, Հոգեւորականաց դասուն եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԲԺԻՇԿ ԿԱՀԷ ՄԻՍԵՌԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 27 Մարտ 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ-Հայկ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:



ԱՇԽԱՏԱՒՈՐԻ ԿԱՐԻՔ

Սուլէյմանիէի մէջ Վաճառականական գրասենեակ մը կարիքը ունի աշխատաւորի մը 20-45 տարեկան: Օրական 8 աշխատանքային ժամով:

Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւե- ռուն՝ 4653066 - 4603179, ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:

ԻՆՉ ԸՍԱԻ ԶՅԴ 34-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Խաճակ Սկրտիչեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար Ընդհանուր Ժողովը կը հանդիսանայ կազմակերպական այն բարձրագոյն օղակը, որ տիրող ընդհանուր կացութեան լոյսին տակ կը ճշդէ յաջորդ ժամանակաշրջանի ընդհանուր ռազմավարութիւնը եւ պարտականութիւն կու տայ գործադիր մարմիններուն, որ անոնք մարտավարական լուծումներով ի կատար ածեն մշակուած ռազմավարութիւնը:

Հայութեան ու Հայաստանին համար ճակատագրական այս օրերուն, շատ էին Ընդհանուր Ժողովէն եղած սպասելիքները: Յաճախ, այդ սպասելիքներուն մէջ կը խառնուէին ռազմավարականն ու մարտավարականը, եւ ատոր պատճառով, հաւանաբար ոմանց մօտ սպասելիքները չեն արդարացուած, իսկ ատոր մեղաւորը Ընդհանուր Ժողովը:



վը չէ, որովհետեւ մարտավարական սպասելիքներ ունեցողները, պէտք է ակնկալիքներ ունենան գործադիր օղակներէն, որոնց պարտականութիւնն է ճշդուած ռազմավարութեան համապատասխան մարտավարութիւն մշակելը, եւ որուն գործընթացը նոր սկսած է:

Հիմա, երբ Ընդհանուր Ժողովը իր ընելիքը ըսած է, կարգը գործադիր մարմիններունն է, որոնք պարտաւոր են ճշդուած ռազմավարութեան համահունչ քայլերու ծրագիր մշակել մարտավարական յստակ ու հետեւողական ուղղութիւններով: Այդ մշակումը առաջին հերթին պէտք է բխի դէպի նպատակակետ տանող տուեալներու շղթայ եւ չդառնայ ամբոխային տրամաբանութեան պատանդ: Իսկ, երբ կը խօսինք ՅԶ Դաշնակցութեան ընելիքներուն մասին, մշակուածը առաւելագոյն արդիւնաւետութեամբ գործադրելու միակ նախապայմանը համադաշնակցական կազմակերպական ամբողջութիւնն է եւ համադաշնակցական ողջ ներուժի ներգրաւումը:

ՀԶ Դաշնակցութեան 34-րդ Ընդհանուր Ժողովը իր առաջին բանաձեւով ու յայտարարութեամբ ըսաւ. «Ողջ հայութիւնը, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնները, յայտնուած են մեր նորագոյն պարտութեան ճակատագրական փուլի մը մէջ, որ աննախադէպ սպառնալիքներ ստեղծած է Հայաստանի ինքնիշխանութեան եւ անվտանգութեան համար»: Այս հաստատումը անոնց համար է, որոնք դեռ չեն գիտակցիր պահի լրջութիւնն ու սպառնալիքներուն ծանրութիւնը: Իսկ, այս հաստատումը կատարած ՀԶ Դաշնակցութեան համար, յառաջիկայ քայլերը չեն կրնար չտարբերիլ նախորդներէն, որովհետեւ աննախադէպ սպառնալիքներուն դէմ դնելը աննախադէպ միջոցներ կը պահանջէ:

Փակագիծերը քիչ մը բանալով, Ընդհանուր Ժողովը անելի կը յստակացնէ աննախադէպ սպառնալիքներու տարողութիւնը, ընդգծելով, որ Հայաստանի իշխանութիւնները վարած ապագային քաղաքականութիւնը պիտի յանգեցնէ Հայաստանի թրջացման եւ Արցախի՝ հայաթափման:

Արցախի հարցին կապակցութեամբ Ընդհանուր Ժողովը նախ կը հաստատէ, թէ այնտեղ բոլորովին այլ կացութիւն կը տիրէ, իսկ Հայաստան դադրած է Արցախի անվտանգութեան երաշխաւորը ըլլալէ, ապա կը շեշտէ, որ Արցախի մէջ ստեղծուած նոր կացութիւնը անհրաժեշտութիւն կը յառաջացնէ ՊԱՅՔԱՐԻ նոր մօտեցումներու եւ ռազմավարութեան որդեգրման՝ մեկնակետ ունենալով արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի լիարժէք իրացումը: Աւելին, յանձնառու կը դառնայ, որ ՀԶ-ն իր ողջ ներուժով, համահայկական կառոյցի կարողականութեամբ՝ նուիրումով ձեռնամուխ պիտի ըլլայ Հայաստանի՝ Արցախի Հանրապետութիւններու անվտանգութեան, տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան, կայունութեան ու գարգացման ապահովման եւ ժողովուրդի կենսամակարդակի բարձրացման ու ընկերային արդարութեան հաստատման աշխատանքներուն:

Հայաստան-Թուրքիա երկխօսութիւնը եւ անոր ընթացքին ՀԶ իշխանութիւններու պարտաւորական մօտեցումն է մնալը՝ Հայաստանի թրջացման լուրջ ու հիմնաւոր մտավախութիւն կը յառաջացնեն ՀԶ Դաշնակցութեան մօտ: Ուստի, Ընդհանուր Ժողովը շատ յստակ կը պնդէ Հայաստանի եւ Թուրքիոյ հանրապետութիւններու միջեւ դիւանագիտական եւ տնտեսական յարաբերութիւններու հնարաւոր հաստատումը չի կրնար ըլլալ ի հաշիւ Արցախի եւ համայն հայ ազգի անժամանցելի իրաւունքներուն: Միայն Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման պարագային է, որ կարելի կը դառնայ հայ-թրքական ամբողջական հաշտեցումը:

Հայաստանի թրջացման քաղաքականութիւնը վիժեցնելու բազմաթիւ ուղղութիւններու կողքին, ՀԶ Դաշնակցութիւնը յատուկ ռազմավարական դեր կը վերապահէ նաեւ Սփիւռքին, հաստատելով, որ Սփիւռքը իբրեւ գլխաւորաբար Հայոց Յեղասպանութեան ծնունդ, Արեւմտահայաստանի բռնագրաման արդիւնք եւ արեւմտահայերէնի պահպանման կռուան՝ ռազմավարական նշանակութիւն ունի հայութեան մղած պայքարին համար:

Եթէ փորձենք ամփոփել ութ օրերու վրայ երկարող արտակարգ այս ժողովին ընելիքը, ապա կարճ կը նշենք, որ հայութիւնն ու հայրենիքը կանգնած են աշխարհաքաղաքական կարեւորութեան, ինքնիշխանութեան եւ ազգային անժամանցելի իրաւունքներու անեացման ու կորուստին առջեւ: Հայութեան ու Հայաստանի լինելիութեան սպառնացող վտանգը կու գայ թուրքատրայեքմանական երկեակէն, որոնք ջրաղացին ջուր կը թափէ ՀԶ իշխանութիւններու ապագային ու պարտաւորական քաղաքականութիւնը: Իսկ այս ընթացքը շրջելու միակ միջոցը, նոր մօտեցումներով ու միջոցներով ընդդիմանալ սպառնացող արտաքին ու ներքին բոլոր վտանգներուն, հայութեան միահամուռ դիմադրութեամբ ու ազգային ազատագրական պայքարի ակունքներն բխող վճռականութեամբ:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ ԶԷ



Խորեն Զինյ. Պերթոլեան

Ականջ մի՛ տար չար խօսքերուն Շուրջի լսուող շշուկներուն Զու հասցէիդ ըսուածներուն, Երբ չես ետիդ երկրպագուն:

Ականջ մի՛ տար վատ ձայներուն Շողոքորթող լեզուներուն Անմիտ խօսող ամբոխներուն, Երբ վստահ ես խիղճէդ արթուն:

Ականջ մի՛ տար աղմուկներուն Աջէն -ձախէն կեղծ լուրերուն Առանց խորքի յանկերգներուն, Երբ խաղաղ ես կեանքով լեցուն:

Ականջ մի՛ տար այն ճիշդերուն, Որոնք շատ են այս մութ դարուն, Երբ դուն ունիս միտք իմաստուն Մաքրագտող մաղ մնայուն:

Ականջ մի՛ տար սուտ գովքերուն Դիմակաւոր խոստումներուն Անոնք կրնան խաբել մարդուն Ճշմարիտն է հիմ հաստատուն:

Ականջ տո՛ւր դուն խրատներուն Հոգեկորոզ առակներուն Տերունաւանդ պատուէրներուն Բարոյալից լաւ նիւթերուն:

Կանչեր, կոչեր սուրբ պահերուն Ոսկի առիթ են ամենուն Սրտանց պատգամ լսողներուն Ուղեցոյց են դարձի գալուն:

Մերեն մղուած, կամքով տոկուն Տեր դառնանք մեր ականջներուն Միւռնուած անդամներուն, Որ ըլլան դուռ օրհնանքներուն:



մաթիւ ուղղութիւններու կողքին, ՀԶ Դաշնակցութիւնը յատուկ ռազմավարական դեր կը վերապահէ նաեւ Սփիւռքին, հաստատելով, որ Սփիւռքը իբրեւ գլխաւորաբար Հայոց Յեղասպանութեան ծնունդ, Արեւմտահայաստանի բռնագրաման արդիւնք եւ արեւմտահայերէնի պահպանման կռուան՝ ռազմավարական նշանակութիւն ունի հայութեան մղած պայքարին համար: Եթէ փորձենք ամփոփել ութ օրերու վրայ երկարող արտակարգ այս ժողովին ընելիքը, ապա կարճ կը նշենք, որ հայութիւնն ու հայրենիքը կանգնած են աշխարհաքաղաքական կարեւորութեան, ինքնիշխանութեան եւ ազգային անժամանցելի իրաւունքներու անեացման ու կորուստին առջեւ: Հայութեան ու Հայաստանի լինելիութեան սպառնացող վտանգը կու գայ թուրքատրայեքմանական երկեակէն, որոնք ջրաղացին ջուր կը թափէ ՀԶ իշխանութիւններու ապագային ու պարտաւորական քաղաքականութիւնը: Իսկ այս ընթացքը շրջելու միակ միջոցը, նոր մօտեցումներով ու միջոցներով ընդդիմանալ սպառնացող արտաքին ու ներքին բոլոր վտանգներուն, հայութեան միահամուռ դիմադրութեամբ ու ազգային ազատագրական պայքարի ակունքներն բխող վճռականութեամբ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հանգուցեալ

ԲԺԻՇԿ ԶԱՐԵՀ ՊԻԼԷՄՃԵԱՆԻ



մահուան սուգին, որ պատահեցաւ Շաբաթ 12 Մարտ 2022-ին: Հանգուցեալի մահուան հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 20 Մարտ 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:

Թուրքիոյ նուրջ

ՀՀ ԵՒ ԹՈՒՐԿԻՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ

12 Մարտին Անթալիոյ թրքական դիւանագիտական ֆորումին, փակ դռներու ետեւ տեղի ունեցած է Հայաստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու հանդիպումը: Յատկանշական է, որ հանդիպումին մասնակցած է հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացի թուրք ներկայացուցիչ Սերտար Զըլը: ՀՀ եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներ Արարատ Միրզոյեանն ու Մելուք Զաւուշովուն վերահաստատած են երկու կողմերու պատրաստակամութիւնը շարունակելու բնականոն գործընթացը յարաբերութիւններու հաստատման եւ սահմաններու բացման նպատակով՝ առանց որեւէ նախապայմանի: Հանդիպումէն անմիջապէս վերջ Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան յայտարարած է, որ Հայաստան վճռական է տարածաշրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու իմաստով: «Մենք պիտի շարունակենք անվերապահ շփումները երկկողմ յարաբերութիւնները գարգացնելու համար», ըսած է Միրզոյեան եւ անելցուցած. «Կը կարծեմ, որ հրաւերը բաւական դրական ուղերձ էր եւ անհրաժեշտ կը համարեմ նոյն դրական ձեւով արձագանգել այդ ուղերձին: Հանդիպումի ընթացքին վերահաստատած ենք երկու կողմերու պատրաստակամութիւնը շարունակելու կարգաւորման գործընթացը՝ յարաբերութիւններու հաստատման եւ սահմաններու բացման նպատակով՝ առանց որեւէ նախապայմանի: Մեր երկու ներկայացուցիչները կ'աշխատին այդ ուղղութեամբ: Ուրախ եմ տեսնել, որ տարածաշրջանի բոլոր պետութիւնները կը փորձեն կառուցել խաղաղութիւն եւ կայունութիւն մեր տարածաշրջանին մէջ: Հայաստանի կողմէն եւս այդ պատրաստակամութիւնը կայ՝ ունենալու խաղաղ եւ կայուն տարածաշրջան», ըսած է Արարատ Միրզոյեան:



Իր կարգին Զաւուշովուն Միրզոյեանի հետ հանդիպումը կառուցողական անուանած է. «Մեր հանդիպումը շատ արդիւնաւետ եւ կառուցողական էր: Նախագահ Էրտողանի եւ վարչապետ Պաշքինյանի դրական ուղերձներէն վերջ յարաբերութիւններու կարգաւորման գործընթաց սկսած է, նշանակուած են յատուկ բանագնացներ: Յատուկ բանագնացները երկու անգամ հանդիպած են Մոսկուայի եւ Վիեննայի մէջ: Անոնք քննարկած են յարաբերութիւնները կարգաւորելու քայլերը, մենք եւս այսօր քննարկեցինք այդ քայլերը», ըսած է Զաւուշովուն: Յիշեցնենք, որ Անթալիոյ դիւանագիտական ֆորումը բացառապէս թրքական նախագիծ է, որ հիմնադրուած է Էրտողանի կողմէն: Այդ ֆորումին առաջին հաւաքը տեղի ունեցած է անցեալ տարի: Մասնակիցներու ճնշող մեծամասնութիւնը թրքալեզու պետութիւններու ներկայացուցիչներ են եւ/կամ երրօրկական եւ ամերիկեան ինչ-որ ժամանակի դիւանագետներ, որոնք թրքական գրասենեակի անթաքնոյց ներկայացուցիչներ են: Օրինակ, անցեալ տարուան ֆորումին մասնակցած է տարահնչակ Մեթիու Պրայզան, որ 44-օրեայ պատերազմին ընթացքին եւ անկէ վերջ գբաղած էր Թուրքիոյ շահերու պաշտպանութեամբ: Ֆորումի մասնակիցներուն թե՛ անցեալ տարուան, թե՛ այս տարուան ճնշող մեծամասնութիւնը մեծ բերկրանք ապրած է 44-օրեայ պատերազմին արդիւնքներով, պաշտօնական շնորհաւորանքներ յղելով Ալիեմին: Նախագահ Էրտողան անձամբ նախաձեռնած է կազմակերպած է ֆորումը: Ամէն պարագայի, ֆորումը կարելի է միջազգային անուանել, քանի որ անկազմ գուտ փրօթրքական եւ միջթրքական ֆորում է:

ԱՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ



Յարութիւն Պերպերեան

Դիմատետրը ողողուած էր Ավարդ Պետրոսեանի մահը գուժող լուրով եւ ցաւակցութիւններով: Շատեր կը կեղրոնանային իր ազգային ու հանրային-հասարակական գործունեութեան, յատկապէս ՀՕՄ-ի ճամբով կատարած ներդրումին, ուրիշներ՝ բարեխառնաբար կը յիշէին իր գրական վաստակը: Խորքին մէջ, Ավ. Պետրոսեանի մահը կրկնակի կորուստ է, որովհետեւ այդքան խոստմնալից արձակագրուհին մէջ, հետզհետեւ գրագետը իր տեղը գիշեցաւ աշխոյժ հանրային գործիչին ... Պիտի ըսուի, որ այս երեւոյթը նորութիւն չէ, մասնաւորաբար Հայաստանի մէջ, ուր անկախութենէն ասդին շատ մը գրողներ քաղաքական գործիչի վերածուցան, սակայն այս երեւոյթը առանձին վերլուծման կը կարօտի:

1983-ին էր, որ «Սովետական գրականութիւն» եւ «Գարուն» ամսագիրներուն մէջ լոյս տեսան Ավ. Պետրոսեանի երկու հրաշալի վիպակները՝ «Խմբերգերի ժամանակը» եւ «Ես Մի Ծառ Եմ Ծիրանի» խորագիրներով: Մինչ այդ իրմէ հրատարակուած էին երկու գրքոյկներ՝ «Երկրի Պապերը» եւ «Թռչնական» խորագիրներով:

Շատախօսութենէ հեռու, համարձակ, ուղղակի եւ անկեղծ ոճով, իսկապէս գեղեցիկ, թարմաշունչ կարճ պատմութիւններ ու վիպակներ էին ասոնք, որոնց դիմաց կ'արձանագրէի, որ ան կրնար «Չապել Եսայեանէն տեք, կնկայ ներաշխարհը բացող ամենատիրական դէմքը դառնալ: Գրողներու եւ կին գրողներու միջեւ գատորոշում պիտի չկատարէինք, եթէ Ավարդ Պետրոսեան իր լուսարձակը չկեղրոնացնէր կնկան կամ հայ կնկան ներքին ապրումներուն եւ հոգեվիճակներուն վրայ» (յօդուածին ամբողջութիւնը բաւական ընդարձակ է, հոս չեմ տեղադրեր, կարելի է կարդալ «Բագին» ամսագրի 1984 Յոկտեմբերի թիւին մէջ, էջ 47-էն 55): Դժբախտաբար, յատկապէս «Ես Մի Ծառ Եմ Ծիրանի»-ն, հակառակ իր ազգային շունչին, կարգ մը յետամնաց ուղեղներու կողմէ կ'ամբաստանուէր նոյնիսկ ... պոնկկա-գրութեամբ: Բանաստեղծ ընկերս՝

Սարգիս Կիրակոսեանը, անելի ուշ, «Ազդակ»-ի եւ «Բագին»-ի էջերէն նոյնպէս դրականօրէն արձագանգեց Ավարդի գրականութեան: Պետք է ըսել, որ մենք կը խօսինք խորհրդային իշխանութեան օրերուն մասին. անկախացումէն տեք՝ արձակի թէ քերթողութեան մէջ անելի համարձակ դրսեւորումներ



եղան, սակայն այլեւս նախկին կաշկանդումները չկային: 1989-ին լոյս տեսաւ իր «Ապրելու Օրէնքը» հատորը, ուր անկախ Ավարդ Պետրոսեանի երախտագիտական ձօնագրումէն, իր երկրորդ պատմութեան հերոսը Յարութիւն կոչած էր, իսկ երրորդ պատմութեան մէջ «խորխտ կերպարանքով» բժիշկ Բերբերեան մը կը յայտնուէր ...: Իր Մոնթթեալ այցելութեան՝ ան կ'ուզէր ինծի այս անունի խաղը նշել. բնականաբար, արդէն անդրադարձած էի անոր:

Այլ տխուր երեւոյթի մը եւս ականատես կ'ըլլանք այս օրերուն՝ գրողներու հանդէպ պետութեան վերաբերումին: Կարծես խորհրդային օրերու կեցուածքը ապրող կամ մահացող գրողին հանդէպ շատ ալ չէ փոխուած, կախում ունի իշխանութեան հանդէպ գրողին վերաբերումէն: Նոյնիսկ այս մէկը իշխանութեան դիրքորոշումէն անդին կ'երթայ. վերջերս փողով-թմբուկով լոյս տեսաւ քաղաքական գործիչի վերածուած այլ խոստմնալի արձակագրի մը՝ Վանօ Սիրադեղեանի մէկ հատորը, տեսնեք նոյն վերաբերումը ցոյց պիտի տրուի՝ Ավարդ Պետրոսեանի նկատմամբ, որուն ժառանգութիւնը նոյնիսկ անելի հարուստ է Վանօ Սիրադեղեանի վաստակէն: Ամէն պարագայի, հոս մեկնակէտը Ավարդի եւ բոլոր միւս խոստմնալից գրողներու կորուստն է, զորս կը սգանք:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տեր Գրիգորեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՌՈՉԻՆ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ (Ծնեալ՝ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ)

մահուան սուգին:

Հանգուցեայի բառասուկի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 20 Մարտ 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլաներ-Հայկայ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:



ՍՕ Խաչ Երջանային Վարդութիւն

Առողջապահական Յանձնախումբ

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ


ՍՕ Խաչի դարմանատունը կարիքը ունի լիաժամ աշխատանքով հետեւեալ պաշտօններուն.

- 1.- Հիւանդներու ընդունման եւ համակարգչային հաշուապահական յայտագիրներու օգտագործման հմտութիւն ունեցող անձի:
- 2.- Վկայեալ հիւանդապահ-բուժքոյրի:

Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 0967 115286 - 0991 530773:

Պրիմակետ

ԱՐՈՒԵՍՏ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՍ



Մարուշ Երամյան


Միշտ ալ արուեստը, իր բոլոր դրսեւորումներով, եղեր է ամբողջ մարդկութիւնը միացնող ազդակ, նոյնիսկ կեանքի ամենէն դժուար պայմաններուն՝ պատերազմներուն ընթացքին: Զամաշխարհային երկրորդ պատերազմին, զինուորները քաջալերելու համար երգիչ-երգչուհիներ կը շրջէին բանակատեղիները եւ իրենց ելոյթներով կը քաջալերէին պատերազմող զինուորները:

Նկարիչներ շատ յաճախ նկարելով պատերազմի դժխեմութիւնները, կրցած են թերեւս մէկ առ հարիւր համեմատութեամբ ոչ թէ ամոքել ցաւերը, այլ խելքի բերել պատերազմողները:

Այսօր նման բան անկարելի կը թուի:

Այսօր արուեստը ինք զոհ դարձած է պատերազմին:

Ուքրանիա-Ռուսիա պատերազմին որպէս Ռուսիոյ վրայ ճնշումի միջոց, Եւրոպան սկսած է հեռացնել այն մեծ երաժիշտները՝ ղեկավարներ թէ երգիչներ, որոնք մինչ այդ Եւրոպայի տարբեր քաղաքներու սիմֆոնիք նուագախումբերուն կամ օփերայի տուներուն հպարտութիւնն էին:



Տակաւին՝ համալսարանական ծրագիրներէն սկսած են հանուիլ բոլոր այն հեղինակները, որոնք ռուս երգած են, առանց նկատի առնելու անոնց մեծութիւնը, ինչպէս օրինակ Տոսթոյեւսկի եւ ուրիշներ:

Անով Եւրոպան ամբողջ աշխարհին կ'երեւի որպէս ամենայնտամաց հաւաքականութիւն մը, որ կը շարունակէ ապրիլ, կամ վերադարձած է ապրելու իր մութ դարերուն մէջ, դժբախտաբար:

Նման կեցուածք բնաւ սպասելի չէր Եւրոպայէն, որուն ամբողջ աշխարհը կը նայէր որպէս արուեստներու եւ գրականութեան ռահվիրայ կամ սատարող:

Զարցերուն տեղեակ խօսակներ եւ քաղաքական մասնագետներ շատ լաւ գիտեն այս բոլորին տուն տուող պատճառները, ազատօրէն եւ առանց վախի կը յայտարարեն զանոնք, սակայն Եւրոպան, ինչպէս որ գրեթէ միշտ խուլ եւ համր կը դառնայ, երբ հարցերը իր սրտով չըլլան, ինչպէս Արցախեան 44-օրեայ պատերազմին, կամ անկէ առաջ՝ Պաղեստինի պայքարին ընթացքին, այս անգամ եւս, տարբեր պատճառներով, ոչ միայն լուռ կը մնայ, այլ եւ կ'ընդունի տգէտի հագուստ հագնելու, հասնելու համար իր նպատակներուն, որոնք միայն ու միայն շահ կը հետապնդեն:

Տակաւին երկու տասնամեակ միայն անցած է այն օրէն, երբ Թալիպանի զինուորները 2001 թուականին կրօնի անուսով ականահարեցին Աֆղանիստանի Պամիյան շրջանի շատ հին՝ 6-րդ դարու, եւ շատ մեծ երկու Պուտտաներուն կոթողները (մէկը 54,8 մետր, իսկ երկրորդը 37,8 մետր), զրկելով աշխարհն ու գալիք սերունդները հին պատմութեան կարեւոր իրադրո՞ւմներէն մէկէն: Թէեւ այսօր, վերատիրապետելէ ետք Աֆղանիստանի, Թալիպան իր իսկ կործանած Պուտտաներու վայրը բացած է զբօսաշրջիկներուն համար, որոնք պիտի տեսնեն հսկայ խոռոչները ականուած Պուտտաներուն: Անհետեւութիւն պարզապէս:

Իսկ դեռ վերջերս ճիւղատիւներն ու ազերիները ինչ հրճուանքով աւերեցին Ղազանչեցոց Տաճարը. ո՞ր քաղաքակիրթ մարդուն ձեռքը պիտի չդողար նման կոթող աւերելու համար... Այսպէս չէ՞ որ կը կորսնցնենք մեր մարդկայնութիւնը, երբ կը դադրինք Արուեստը տեսնելէ եւ գնահատելէ:

Ինչ տարբերութիւն ուրեմն այսօրուան Եւրոպային եւ Թալիպանի վայրագ զինուորներուն կեցուածքներուն միջեւ: Եթէ Թալիպանը քարեղէն կոթողներ քանդեց, Եւրոպան այսօր ոգեղէնն է, որ կը քանդէ:

Դժբախտաբար նման կեցուածքներ մեզ, հայերս բնաւ չեն զարմացներ, մենք որ անընդհատ կը կերտենք եւ անընդհատ ականատես կ'ըլլանք մեր աշխատանքին քանդումին: Մեր վանքերն ու եկեղեցիները, Անին իր բազմաթիւ կոթողներով, Ջուղայի խաչքարերը եւ շատ ու շատ կոթողներ կը շարունակեն թիրախ մտալ վայրագութեան:

Միւս կողմէ սակայն ինչպէ՞ս չգնահատել Իրանի Իսլամական պետութիւնը, որ կը գուրգուրայ, կը խնամէ եւ կը նորոգէ իր հողերուն վրայ գտնուող հայկական վանքերն ու կոթողները: Մարդիկ գիտակից են, որ նման կոթողներ միայն շահ կ'ապահովեն իրենց, զբօսաշրջիկներու աւելի եւ աւելի մեծ թիւ մը գրաւելով:

Իրանը սակայն իր այս կեցուածքով թէեւ պետք էր օրինակ հանդիսանար գոնէ իսլամական աշխարհին, կը մնայ գարտուղի երեւոյթ մը նորօրեայ պատմութեան մէջ:

Յետոյ սրտի ահաւոր փոթորիկով կը դիտենք մսխուող կեանքերը ու կը մտածենք՝ գոնէ թող ման երիտասարդները, որոնցմէ եկող սերունդներուն մէջ անպայման պիտի ըլլան երաժիշտներ, գրագետներ, արուեստագետներ եւ ստեղծեն արուեստի նոր կոթողներ: Բայց պէ՞տք է ըլլան, ման երիտասարդները, որոնք ահա արդէն քանի տարի է, քանի տասնամեակ եւ քանի դար, ի գուր կը գոհուին:

ՄԵՐ ՃԵՄԱՐԱՆԸ

(ԱԶԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ 75-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)



Գրիգոր Տունկեան

Երկաթեայ մեծ դարպասէն ներս, առաջին քայլափոխիդ քեզ կը դիմաւորէ ճեմարանի ժպիտը, պարզ եւ ընդարձակ բակը, որ հալեպահայութեան համար հոգեհարազատ էր Միս Եփփէի օրերէն:

Որպէս շրջանաւարտ, այսօր երբ չորս տասնամեակներու հեռուութենէն կը դիտեմ ճեմարանը, յիշողութեանս պաստառին վրայ

հողն ու տարածողը կը հանդիսանային:

Ճեմարանը գտնուելով հանդերձ Զալէպի հիւսիսային ծայրամասը, Նոր Գիւղի մէջ, կեդրոնը կը հանդիսանար հայ Զալէպի, ուր տեղի կ'ունենային Զալէպ ժամանած պաշտօնական անձնաւորութիւններու ժողովրդային հանդիպումները հալեպահայութեան հետ:



որքան յստակ կը տեսնեմ զայն, բազմապիսի առիթներու ծառայած որպէս իտեալ վայր:

Ճեմարանի բակը, առաջնային կերպով, ծանրաբեռնուած դասապահերէն ետք, ուսանողներու համար լիցքաթափման փնտռուած վայրն էր: Զիսիսէն հարաւ երկարող պարսպապատ այդ տարածքին մէջ դիւթականը կեդրոնէն քիչ մը արեւմուտք, Նոճիներով եզերուած Նրբանցքն էր, ուր առաւելաբար կը ճեմէին երեք կարգերու աշակերտները, հոն էր ճեմարանը: Այդ Նրբանցքը եզերող Նոճիներու բուններուն վրայ, որքան անուններ եւ սրտիկներ կային դաջուած, որքան յոյգեր եւ խոստովանութիւններ կային այդ Նրբանցքին մէջ խօսուած, դասընկեր-դասընկերուհիներու միջեւ, որոնք աւելի վերջ պիտի առաջնորդէին զիրենք կեանքի ընկերութեան: Նրբանցքը անխօս վկան էր այդ բոլորին: Օր մըն ալ «բարեկարգում» անունին ներքեւ վերացած այդ Նրբանցքը մնաց ճեմարանականներու յիշողութեան մէջ, երբեմն-երբեմն վերակենդանացնելով ուսանողական յիշատակները: Ծառերը երբեք չխօսեցան...:

Կիրակի օրերը, առաւօտեան կանուխ ժամերէն սկսեալ, ժպիտը ժամադրավայրն էր գայլիկներու եւ սկաուտներու դաշտային գործունէութեան: Անոնց ճոռուղիները կը լսուէր թաղ մը անդին:

Ամառնային արձակուրդներու ամիսներուն, այս բակն էր, որ կը հիւրընկալէր հալեպահայ եւ հիւրաբար քաղաք այցելած հայ երգի աստղերու երգահանութիւնները: Զագարաւոր հանդիսատեսներ այդ բակին մէջ համախումբ կը շերմանային հայ մշակոյթով եւ զայն պա-

ճեմարանի բակին մէջ տեղի կ'ունենային համազգային նշանակալից տօնախմբութիւնները եւ կը կայանային հալեպահայութեան քաղաքացիական յանձնառութիւններու ելոյթները, ինչպէս նաեւ Զայոց Յեղասպանութեան ոգեկոչման աշակերտական համախմբումները:

Իւրաքանչիւր վերամուտին, այս բակն էր, որ կը հիւրընկալէր ճեմարանի քերմէսը եւ իր ստեղծած ընդհանուր խանդավառութեան մթնոլորտին մէջ յատուկ երանգ կու տար Նոր սկսող ուսումնական տարեշրջանին:

Այս բակէն էր, որ ամբողջ քաղաքին մէջ, չըսելու համար երկրին, տարածուեցաւ քերմէս կազմակերպելու մշակոյթը:

Ճեմարանի քերմէսները, առ այսօր, կը մնան հալեպահայութեան հաւաքական յիշողութեան մէջ. կը պահուի եւ կը շարունակուի անոր:

Զալէպահայութեան առօրեային հետ ընդելուզուած ճեմարանը, այսպէս ալ, բոլորին համար դարձաւ «Մեր ճեմարանը»:

Ճեմարանի յիսնամեակին առիթով հրատարակուած յուշամատենին մէջ վաւերականօրէն ներկայ են այս տարածքի պատմութեան հետ աղերսուած բոլոր մակրամասնութիւնները, իսկ ճեմարանի առաքելութեան եւ վաստակին մասին կը վկայեն անոր եօթանասունհինգ տարիները եւ աշխարհասփիւռ հազարաւոր շրջանաւարտները, որոնք հալեպահայու հաւաքական կերպարի մէկ մասնիկն են հարազատ: Վերապրումէն նուաճում՝ յաղթերգութիւնն են ազգին:

Զալէպահայութեան ինքնութեան ամրոց, ճեմարան. Յրբէլեանդ շնորհաւոր:

«ԵՐԲ ՏԱՄԻ...»

Սկիզբ՝ էջ 9

բարեփոխելու ողջ ընկերութիւն մը: Ան ինքզինք պետք չէ նուիրէ միայն տնային աշխատանքներուն, այդ չէ իր գոյութեան միակ նպատակը:

Զարկ է, որ ան գործունեայ ըլլայ, սորվի ու սորվեցնէ»:

Իսկ երբ հարց տուինք տիկին Երվային, թէ ո՞վ է ուժեղ կինը, ան պատասխանեց. «Ամենադժուար բանը կեանքի մէջ ցաւոյ յոյսի վերածելն է, երբ յաջողեցար իրականացնել ատիկա, ուժեղ ես արդէն»:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՆԿԻՆ

**ՔԵՐԹՈՒԲԱԾՆԵՐ
ԱՄԱՆՏԱ
ԼԱԲԼԷՅՍԷՆ**



*Անգլերեն թարգմանեց
Սոսի Միշոյեան Տապապաղեան*

Ամանտա Լաբլեյս ժամանակակից բանաստեղծ է և արձակագիր է: Կ'ապրի է և կը ստեղծագործէ Նիու Ճորջի մէջ: Այս փունջը ամուսնացած է իր «The princess saves herself in this one» քերթածնէրու ժողովածոյէն, որ տպուած է 2016-ին: Նոյն տարին իսկ հատորը արժանացած է «Goodreads Choice Award» գրական կայքի «լաւագոյն բանաստեղծական ժողովածոյ» մրցանակին: Ամանտա ինքզինքը համարելով ֆեմինիզմի շատագոյն է ընկերային արդարութեան պաշտպան, սոյն հատորին մէջ յառաջ կը քաշէ ընկերային տարբեր հարցեր և կը նկարագրէ կնոջ ինքնաճանաչման ուղին: Ստորեւ քանի մը բանաստեղծութիւն.

Ծնած եմ
քիչ մը գրքախելք:

Չիս կարելի եր գտնել
գիրքերս շոյելով զբաղած

ամանձին, քամուած
անկողինիս մէջ:

Այդ ամբողջ ընթացքին կը սպասէի
որ գիրքերը դուրս թափէին
իրենց նրբին բառերը
կանաչ փարթամ գորգին վրայ,

որ մէկ ամ մէկ
կարողանայի զանոնք հաւաքել

Եւ հատապտուղի նման
համտեսել բերնիս մէջ:

Համոզուած եմ
որ դուք

աստղափոշի եք

որ կը հոսիք
այդ

երակներէն:

-կանայք ձեռով մը կախարդանք են:

Ահա այն ովկիանոսը
ուր
հապճեպով
կը սուզուիմ
երբ
այլեւս
չեմ կրնար
շնչել
իրականութեան մէջ:

-փախչող ջրահարս Բ.

Ես գիս
համոզեցի
որ կեանքս
պէտք չէ որ
աւարտի
այլոց պատճառով...

Ուստի յառաջացայ
եւ զծեցի արեւը
ի՛մ երկնքիս:

-ապրիլ կեանքովս

Ան
չսորվեցուց
սիրելի ինքզինքս

Բայց եղաւ
այն կամուրջը
որ օգնեց ինձի
հասնելու

հոս:

Չեմ վախնար այն հրէշներէն
որ անկողինիս տակ կը պահուըտին:

Կը վախնամ սակայն
թուխ, խառն մագերով
ու քնատ աչքերով այն տղոցմէ

որոնց բերանը
միա՛յն կիսա-ճշմարտութիւններ
կ'արտաբերէ:

Իր քմծծաղը ոսկորներս կը ցաւցնէ:

-ցաւը, զոր սիրով ընդունեցի:

Բացաւ զիս նման գիրքի
եւ մէջս դարձեալ
բանաստեղծութիւնը լեցուց :

-անձնական գրիչս եւ թուղթս:

Անձրեւին տակ
փսփսացող
խոստումներ
պիտի թրջուելով

ան

հե

տին:

Ինք կրակէ եր
ես՝ սառնոյցէ:

Երբ մօտեցայ
բոցին

հալեցուց զիս
իր անթեղ կրակով

ստորաքարշէլով
ջրափոսին մէջ:

Ժամանակի թաւալքին հետ
վերակազմուեցայ

սակայն ոչ երբեք
այն նոյն դիւրաբեկ,
ջրային կրկնօրինակը
նախորդին:

Թերեւս
անգամ մըն ալ հանդիպինք
ուրիշ տեղ
հոն, ուր
ներումը կ'աճի
նոյնքան գեղեցիկ,
որքան
պարտեզիդ մէջ
աճող
լուիկները:

-փայլուն կարմիր յոյսը, որ կ'ողողէ զիս ու զգիշերներէ

Պիտի
չդադրի
զիս
հալածելէ:

-իմ ուրուականս

Եթէ երբեւէ
աղջիկ ունենամ,
ամառին անգամ
«ո՛չ» բառը սիրելի
պիտի սորվեցնեմ իրեն
եւ
թոյլ պիտի չտամ
որ ան յանցաւոր զգայ
այդ բառը գործածելուն համար:

Երբ մայրդ
սկսի մոռնալ
անունդ,
կը սկսիս
մտածել
թէ դու քնդհանրապէս
գոյութիւն
ունի՞ս:

-վերջին կայան

Երբեք
չի՛ ակնկալեր
որ մահը պիտի ըլլայ
ամենէն հաւատարիմ
ընկերակիցդ

Հասկցայ սակայն
որ ան միակն է
որ կը փութայ քեզի
ամանց խնդրելու:

-Միակը որ երբեք չի լքեր:

Երբ
վերջապէս
հասաւ ժամը
իր մեկնումին,
բանաստեղծութիւններս
տեղաւորեց
ճամպրուկին մէջ
ու տարաւ հետը.

-նախ սիրտս, յետոյ բառերս:

Եկաւ
պահ մը
երբ բանաստեղծութիւնը
ցոյց տուաւ ինձի
ինչպէս արիւնիլ
ամանց արիւնի:


Լռութիւնը եղած է մի՛շտ իմ ամենաբարձր ճիչս:



«ԵՐԱԶՆԵՐԷՍ ՄԷԿՆ ԷՐ ԱՌԱՋԻՆ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԻԼ ՈՒՄՄԱՆՍ ՃԱՄԲՈՎ: ԵՐԱԶՍ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՅԻ»

Եթե կը կարծեք, թե ընտանեկան պարտաւորութիւնները, տարիքի յառաջացումը, կամ որեւէ անյարգաբարեւի պատճառ կրնայ արգելք դառնալ ձեր ուսումը շարունակելուն, կամ երազը իրականացնելուն, հետեւեցէ՛ք մեր գրուցակիցներուն եւ պիտի վկայեք, որ հաւատք եւ կամք ունեցող աշխատասեր կիւն անարգել կրնայ հասնիլ իր նպատակին:

Շաղիկ Տաղլեան-Պարտումեան մայր է, ուսուցչուհի, տանտիկին եւ ուսանողուհի: Ան չէ բաւարարուած 3 վկայականներով (քիմիագիտութիւն, ապա մագիստրոսի կոչում եւ



կրթական ձեռնհասութեան վկայական), ներկայիս կ'ուսնի դեղագործութիւն: Վերջինիս առիթը ընծայուեցաւ իրեն քիմիագիտութեան համալսարանի առաջնակարգ շրջանաւարտը ըլլալուն բերումով:

«Շատ խճողուած օրակարգ ունիմ, նախ մայր եմ գաւկիս համար, ապա ուսանողուհի՝ համալսարանը եւ ուսուցչուհի՝ դպրոցը: Ընտանեկան պարտաւորութիւններ ունեցող տանտիկին եմ նաեւ: Ես ալ երբեմն չեմ հաւատար, թե այսքան աշխատանք միաժամանակ ինչպէ՞ս կը տանիմ: Առօրեայ սպառիչ է, բայց ես գոհ եմ», ըսաւ տիկին Շաղիկը մեր մտերմիկ զրոյցին ընթացքին:

Ապա շարունակեց. «2017-ին որոշեցի մասնակցիլ ուսուցիչներու Ողիմպիական մրցումին՝ քիմիագիտութեան ճիւղին մէջ: Ուսանք ըսին, թե դժուար է, չես կրնար յաջողիլ, բայց այդ խօսքերը ինձի ուժ ու խթան դարձան ջանքերս կրկնապատկելու ու անգամ մը եւս նետուելու գիրքի ու դասի մարդ: Իսկապէ՛ս ալ Հայէպի առաջին դիրքը գրուեցի, ապա մրցումը շարունակեցի Դամասկոս, ուր Սուրիոյ մակարդակով արժանացայ երկրորդ դիրքին, որուն համար պարգեւատրուեցայ Սուրիոյ Առաջին Տիկնոջ՝ Ասմա ալ Ասատին կողմէ: Իմ երազներն մէկն էր անոր հետ հանդիպիլ, բայց ոչ պատահականօրէն, այլ իմ ուսմանս, աշխատանքիս ու ջանքերուս հետեւանքով: Հանդիպումը իջրայատուկ էր, օգտաշատ ու շատ մեծ տպավորութիւն թողուց վրաս: Պարգեւատրումին իբր արդիւնք պաշտօնապէս Նշանակուեցայ քիմիագիտութեան մարզիչ՝ աշակերտներ

ըր Ողիմպիական մրցակցներու մարզելու: Մինչեւ այսօր սիրով կը տանիմ այս աշխատանքը: Յաջողեցայ մրցումակ դարձնել մեծաթիւ աշակերտներ, որոնց մէջ եւս կան հայեր: Իմ այս յաջողութիւնը նախ կը պարտիմ համալսարանական ուսմանս, յարատեւ հետեւողութեանս, ջանքերուս եւ զօրաւոր կամքիս»:

Ընտանեկան պարտաւորութիւններու, ընկերային կեանքի, գործի եւ ուսման միջեւ ժամերը դասաւորելու անհրաժեշտութեան անդրադառնալով տիկին Շաղիկը ըսաւ.

«Ես ծրագրել կը սիրեմ: Ծաբայ մը առաջ բժախն դիր ցուցակ մը կը պատրաստեմ ընդհանուր աշխատանքներու ընթացքին մասին, ներառեալ տան պատասխանատուութիւններու: Սովորութիւն դարձուցած ենք տան մէջ բոլորս այդ ցուցակին հետեւիլ, եւ յաջողած ենք: Ժամադրութիւններս կը յարգեմ, շրջապատեալ կը պահանջեմ նոյնը: Բարեբախտաբար ամուսինս թել ու թիկունք է ինձի իր հասկացողութեամբ: Համոզուած եմ, որ հիմա իմ վագվելու տարիքս է: Երբ աշխատանք մը սրտանց կ'ընես, կը յոգնիս, սակայն գոհունակութիւնդ անսահման կ'ըլլայ: Երբ լաւ արդիւնքներով դուրս կու գամ, ներքին գոհունակութիւն մը կ'ապրիմ: Ընկերային կեանք ալ ունիմ, ընտանիքիս ալ բաւարար ժամանակ կը տրամադրեմ, միշտ առաջնահերթութիւնը կը վերապահեմ դստերս»:

Շաղիկ յայտնեց նաեւ, որ թատրոնը իւրայատուկ տեղ ունի իր աշխարհին մէջ:



«23 տարիէ ի վեր դերասանուհի եմ: Ժառանգական է, արիւնհիս հետ շրջան կ'ընէ թատերգութեան հանդէպ տածած սերս: Ամէն առիթ ընծայուելուն պիտի յայտնուիմ բեմահարթակին վրայ: Արուեստը կը յղկէ մեր ճաշակն ու կեանքը»:

Շեշտելով ուսման կարեւորութիւնը, տիկին Շաղիկը խօսքը ուղղելով կանանց ըսաւ. «Ուսումը տարիք չունի, միշտ ալ առիթներ կան ինքզինքդ զարգացնելու, մի՛ ըսեր ուշ է: Եթէ կամքով գիտուած ես, ոչ մէկ բան արգելք կը հանդիսանայ ուսումը շարունակելու, վկայականդ ստանալու եւ ուզած դիրքիդ հասնելու: Ո՛չ ամուսնական կեանքը, ոչ ալ տարիքով յառաջանալը: Նախապատուութիւնը տալով գաւակներուդ եւ համաձայնաբար ամուսինիդ ու ծնողքիդ հետ, կրնաս աշխատիլ ու հասնիլ ձգտումիդ: Գաղտնիքը ներքին ուժդ իմանալու եւ գայն լաւապէս օգտագործելու մէջ է»:

«ԵՐԲ ՑԱԲԻ ՅՈՅՄԻ ՎԵՐԱԾԵՍ, ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՈՒԺ ԿԸ ԿՈՒՏԱԿԵՍ»

Դժուար պահերն ու փորձութիւնները գանազան հետեւանքներ կ'ունենան: Անոնք կամ կը յուսալքեն մարդ արարածը, կամ ալ պինդ ու նպատակաւոր կը դարձնեն: Որոշումը մերն է: Սուրիոյ պատերազմը բոլորին համար տագնապալի շրջան էր, իւրաքանչիւրը կորսնցուց թանկարժեք բան մը, սակայն սիրելիի մը կորուստը ամենէն դժուարն էր, մանաւանդ երբ ան գաւակ էր, ծնողք, կամ ընտանիքի անդամ ու հարազատ: Նահատակ գինուոր Գրիգոր Աշնագլեանի մայրը՝ Երվա Ղանտուր Աշնագլեանը, կորսնցնելով մէկտեղ իր գաւակը ընտրեց պինդ մնալու ուղին՝ միութարուելով գաւկիս հերոսութեամբ, գիտակցելով որ հողին, հայրենիքին, ծննդավայրին, արժեքներուն համար նահատակուիլը անմահութիւն է, որ ապրելու ուժ կը հայթայթէ ողջ մնացողներուն:

«Տղուս նահատակուելուն առաջին 3 ամիսները շատ դժուար անցան: Բոլորովին քանդուած եւ յուսալքուած էի: Բայց ետքը, ինքզինքս գտայ, քաջ գիտակցելով որ պետք է յանձնուիլ, ճամբայ ունիմ շարունակելու, շատ աշխատանքներ կրնամ տանիլ տղուս հողին եւ անունին համար: Ես ալ գիտուեցայ համբերութեամբ եւ լծուեցայ աշխատանքի: Առաջին միութարութիւնս նահատակ տղուս անունով դպրոցի մը անուանումն էր, որ հպարտութեամբ ամոքեց հողիս, նկատի առած, որ առաջին հայ նահատակներ, որոնք անունով պետական դպրոց մը կ'անուանուէր: Ասիկա բարոյական զօրակցութիւն էր ինձի եւ բոլոր նահատակ գաւակ ունեցող մայրերուն», շեշտեց տիկին Երվա:

Ան շաբաթուաբար մասնագետ է 10 տարիէ ի վեր: Տեւաբար հետեւելով մասնագիտական դասընթացներու ինքզինք զարգացուցած եւ փորձառութիւն ու իւրայատուկ ճաշակ ձեռք բերած է այս մարզին մէջ: «Արհեստիս սիրահարն եմ պզտիկուց: Երագս էր ունենալ յատուկ դիմա-յարդարման կեդրոնս: Եւ իրակա-նացաւ... Առաջինը հիմնեցի պարտքով, կրցայ կազմակերպել աշխատանքս, ինչպէս նաեւ դասընթացներով երիտասարդ սերունդներուն այս արհեստը սորվեցուցի գանա-

զան ուսումնարաններէ եւ հաստատութիւններէ: Մօտաւորապէս ամիս մը առաջ օժանդակութեամբ կրցայ մասնագիտական եւ արդիական գործիքներով օժտուած կեդրոնս ունենալ, որ այստարածաշրջանին առաջինն ու միակն է իր որակով ու լաւ արձագանք կ'ունենայ: Ես այսպիսի կեդրոն ունենալու



յոյն անգամ չէի փայլիայեր, սակայն, փառք Աստուծոյ, հիմա անելին ունիմ», անցուց տիկին Երվա:

Անոր առաջնահերթութիւնը տունին եւ ընտանիքին է: Արհեստի կողքին կը մասնակցի բարեփրական աշխատանքներու: «Չաւկիս նահատակութենէն ետք ուզեցի բան մը ընել, որ կեանքս ամբողջութեամբ փոխէ: Որոշեցի ժամանակեւ մեծ բաժին մը տրամադրել բարեփրական աշխատանքներու, գորս կը կատարեմ տղուս հողին համար, առանձին, առանց կողմի մը օժանդակութեան, ինչպէս ծերանոցի, քաղցկեղով տառապող մանուկներու եւ այլն... չբաւարարուելով նիւթակաւ ներդրումով, անոնց տրամադրութիւնը բարեփոխելու յայտագիրներ ալ կը պատրաստեմ: Այսպիսի բնոյթ կրող աշխատանքներու մասին եւ առջիկա ալ կ'օժանդակեմ ինձի, որպէսզի իրենք եւս շարունակեն նոյն ուղին», յուզումա-խառն ապրումներով շարունակեց տիկին Երվա:

Անոր համաձայն, կնոջ յաջողութեան բանալին աշխատանքին նուիրումն է: «Այս դարուն կիսն ու այդ մարդը համահաւասար են: Կիւնը, եկամտաբեր աղբիւրի կարիք ունենայ կամ ոչ, պետք է աշխատի, ինքզինք փաստէ իր միջավայրին մէջ, գործուն ներկայութիւն դառնայ: Կիւնը ուժ եւ կարողութիւն ունի

(Հար. 2)

Հարցազրոյց վարեց Սեւանայ Հայլաճեան

Շաբ.՝ էջ 7

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Գերդեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱԼԻՍ ԳԵՈՐԳԵԱՆԻ (Ծնեալ՝ ՉԱՄԻՉԵԱՆ)

մահուան սուգին:
Հանգուցեայի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 27 Մարտ 2022-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլաներ -Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունին եկեղեցոյ ներքնարահէն ներս:

ԻՆՉ ԿՐՄԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ

Շաբթուան սկիզբը յաջող անցաւ: Ձեր տաղանդներուն շնորհիւ և տրուած ձեր պիտի բերէք ձեր կեանքէն ներս: Ուստի նոր թափ տուէ՛ք ձեր տաղանդին եւ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ:

ՏՈՒԼ

Շաբթուան սկիզբը բարդ էր: Փոփոխութեան ենթարկեցէ՛ք ձեր ծրագիրները, որպէսզի անյաջողութեան չմատուցէք եւ նեղ կացութեան մէջ չիյնաք:

ԵՐԿՈՒՐԵԱԿ

Ձեր կիւրաքանչեւ վիճակը բարելաւումի ընթացքին մէջ է: Աշխատավարձի բարձրացում կամ մեծ նիւթական պարգեւ մը պիտի ստանաք:

ԽԵՏԳԵՏԻՆ

Շաբաթը բաւական յաջող պիտի ըլլայ անոնց համար, որոնք մէջ վառ է մրցակցութեան ոգին եւ իրենց առաւելութիւնները բացայայտելու մարմաջը:

ԱՌԻԾ

Պէտք է երկար ու քրտնաջան աշխատանք, յաջողութեան հասնելու համար: Կեդրոնացէ՛ք լուրջ, ինքնուրոյն աշխատանքի վրայ:

ԿՈՅՍ

Շաբթուան սկիզբը ծանր էր: Աշխատանքի մէջ խնդիրներ ունիք: Պէտք է ձեռք բերէք ղեկավարութեան եւ ձեր գործընկերներուն վստահութիւնը:

ԿՇԻՈՋ

Առիթ մի՛ տաք, որ մարդիկ միջամտեն ձեր գործերուն: Կրնաք շփոթի մատուցիլ եւ ծախսողի: Ինքնավստահ եղէ՛ք եւ գաղտնապահ:

ԿԱՐԻՃ

Ձեր սիրային յարաբերութիւնները մուտք կը գործեն աւելի մտերմիկ փուլ, ուր պիտի գտնէք վստահութիւն, փոխըմբռնում, յարգանք եւ շերմութիւն:

ԱՂԵՂՆԱՌ

Կը սիրէք շատ խօսիլ ձեր անձին մասին: Ոմանք կրնան չարաշահել ձեր անկեղծութիւնը: Աւելի լաւ կ'ըլլայ եթէ աւելորդ մանրամասնութիւններու մասին չխօսիք:

ԱՅԾԵՂՋԻՐ

Բաւական հաճելի շաբաթ մըն էր: Եթէ կ'ուզէք, որ այսպէս շարունակուի՝ մի՛ յետաձգէք կարելորդ գործերն ու ծրագիրները:

ՋՐՅՈՍ

Կարող անձ էք եւ կրնաք հասնիլ մեծ յաջողութիւններու, սակայն պէտք է քիչ մը խորամանկ եւ ճարպիկ ըլլալ եւ ոչ բոլոր գաղտնիքները բացայայտել:

ՁՈՒԿ

Այս շաբաթ պիտի յաջողիք ձեր շրջապատէն ներս շատ բան փոխել, բայց այդ փոփոխութիւնը կատարելու համար պէտք է վճռակամ եւ հաստատակամ ըլլալ:



Սեան Ազարիկեան-Պարմասպեան

ԾԱՂԻԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ

Գարնան սեմին ենք:

Գարունը այն եղանակն է, որ կը մղէ իւրաքանչիւր անձ խորհելու բնութեան հրաշալիքներուն եւ գեղեցկութիւններուն մասին:

Գարնան ծաղիկները հիանալի միջոց կը հանդիսանան՝ մոռնալու ձմրան տխուր օրերը եւ խանդավառութեամբ լեցնելու մեր կեանքը: Բնութեան սքանչելի արարածները ոչ միայն կրնան գեղեցկացնել մեր բնակարանները, այլեւ կը բարելաւեն մեր տրամադրութիւնը:

Երբեմն ծաղիկները պարզապէս ծաղիկներ չեն, այլ աւելին... Անոնք լռութեամբ կը յայտնեն գաղտնիքներ, կը դառնան սիրահարներու «խօսնակ»-ներ, շնորհակալութիւն կամ ներողութիւն յայտնելու ազդու միջոցներ:

Աշխարհի տարածքին կան տասնեակ ծաղիկներ, որոնք կանանց անուններ են նաեւ, ինչպէս՝

1-Վարդ (Վարդի, Վարդենի) Rose- Իգական սեռի ամենէն տարածուած ծաղիկի անունը վարդն է: Կ'ըսուի, թէ ան սիրոյ եւ գեղեցկութեան յոյն աստուածուհի՝ Աֆրոտիթի ծաղիկն էր:

Այսօր աշխարհի վրայ գոյութիւն ունի վարդի 300 տեսակ եւ մօտ 3000 ենթատեսակ: Աշխարհի ամենածեր վարդի թուփը կ'աճի Գերմանիա (1000 տարեկան է), որ կը գտնուի Զիլդես-հայմերի տաճարի պատին մօտ:

Ճաբոնցիք ունին վարդի իւրայատուկ տեսակ՝ քամելոն, որուն թերթիկները առաւօտեան կարմիր են, իսկ երեկոյեան սպիտակ երանգ կ'ունենան: Յայտնի է նաեւ փոքր «Սի» վարդը, որուն թերթիկները բրնձի չափ են:


Վարդի իւրը կը գտնուի կանաչի գրեթէ բոլոր անուշահոտներու բաղադրութեան մէջ: Անգլիոյ մէջ, սիրոյ խոստովանութեան համար ականդար կը նուիրեն երկու դեղին վարդ:

2-Շուշանի lily- Շատ սիրելի ու տարածուած անուն է Շուշանը: «li-li» թարգմանաբար կը նշանակէ սպիտակ-սպիտակ: Այս իսկ պատճառով ան



կը համարուի մաքրութեան եւ անմեղութեան խորհրդանշան: Կան մօտ 90 շուշանի տեսակներ, որոնք կը տարբերին իրենց ձեւով եւ գոյնով:

3-Մանուշակ Violet- Յատկապէս Ֆրանսայի մէջ տարածուած անուն է: Գարնան մանուշակ



կը կ'աճի անտառներու, գետերու եւ առուակներու ափերուն, չոր ու քարքարոտ վայրերու մէջ: Բուրումնաւետ դեղին ծաղիկներով մանուշակի

կը հանդիպինք Սիւնիքի մարզին մէջ, իսկ Լոռիի եւ Տաւուշի մէջ մանուշակները մեծ եւ մակիշակազոյն են: Ծանօթ են մանուշակի մօտ 500 տեսակներ: Մանուշակէն կը պատրաստուին քունկներ, որոնք կը գործածուին մաշկային հիւանդութիւններն ապաքինելու համար:

4-Յասմին (Նազվարդ) Jasmine Սպիտակ, - Շատ գեղեցիկ ծաղիկ է, որուն բոյրը շատ մեղմ եւ հաճելի է: Բուժական նպատակով կ'օգտագործուին բոյսի բոլոր մասերը: Տերեւները որպէս



տաք թրջոցներ կը դրուին մաշկի վերքերուն վրայ: Արմատները հում վիճակով կը գործածուին գլխացաւի եւ անքնութեան պարագաներուն: Յասմինի իւրը բուժիչ դեր ունի մկանային ցաւերու պարագային, իսկ ծաղիկը կը գործածեն թէյի եւ կանանց անուշահոտեր պատրաստելու համար:

5-Մարգարիտ- Այս ծաղիկին անունը լատիներէն թարգմանուած է: Անոր բազմաթիւ, փոքրիկ, սպիտակ եւ վարդագոյն ծաղիկները կը նմանին մարգարիտներու, որոնք ցրուած են խոտե-



րու վրայ: Ապրիլ ամսուն, Անգլիոյ փողոցները կը գարդարուին սպիտակ եւ վարդագոյն մարգարիտի փունջերով: 19-րդ դարուն, Ֆրանսայի մէջ Ծաղկազարդը նուիրուած էր այս ծաղիկին: Մարգարիտներով կը գարդարէին իրենց տունները, լապտերներն ու պատուհանները:

Գարնանամուտի սեմին, Ուսուցչաց եւ Մայրերու գոյգ տօներուն առիթներով շերմապէս կը շնորհաւորեն բոլորիդ տօնը: Մնացէ՛ք միշտ ծաղիկներու նման՝ գեղեցիկ եւ բուրումնաւետ:



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Հայկաի պասքեթի աղջկանց Ս16-ի ախոյեանական մրցումներուն, ՀԱՇՄ-ի կազմը շարունակելով իր յաղթարշաւը 66-62 արդիւնքով պարտութեան մատնեց Իթթիհատը: Խումբը մինչեւ օրս պարտութեան մատնեց Հայկաի բոլոր խումբերը եւ գրաւեց աղիսակին առաջին դիրքը:

- Կիրակի 13 Մարտին, ՀԱՇՄ-ի ֆութպոլի տղոց Ա. խումբը 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց ալ Շահպան:

- Հայկաի Իթթիհատ ակումբի նախագահ Պասէլ Համուին Ուրբաթ, 11 Մարտին ֆութպոլի խումբի կատարած մրցումէն ետք ներկայացուց իր հրաժարականը: Հայկաի Մարզական Դաշնութիւնը մինչեւ նոր ընտրութիւններու թուականը ակումբի նախագահութեան պաշտօնը վստահեցաւ: Ռուսէյն Մարթիկին: Նշենք, որ Իթթիհատ 2-0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Ֆըթուլէն, եւ մտաւ Բ. դասակարգ՝ հասնելով վտանգի գօտի:



ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՐԹՈՐ ԴԱԻԹԵԱՆ ԴԱՐՁԱՐ ՈՍԿԵԱՅ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Հայաստանի առաջատար մարմնամարզիկ Արթուր Դաւիթեան Տոհայի մէջ կայացած աշխարհի ախոյեանական մրցումներու աւարտին գրաւեց առաջին դիրքը եւ նուաճեց ոսկի մետալ: Ըստ Հայաստանի Մարմնամարզի Դաշնութեան մամուլի ծառայութեան, հայ մարզիկը յաղթեց յենացատկի եզրափակիչին: Մէկ շաբաթ առաջ Արթուր նոյնանման արդիւնքի հասած էր նաեւ գերմանական Կոտփուս քաղաքին մէջ տեղի ունեցած նմանատիպ գաւաթի խաղարկութեան: Նշենք, որ Հայաստանի մարմնամարզութեան հաւաքականը Տոհայի մէջ նուաճեց չորս մետալ՝ 2 ոսկի, 1 արծաթ եւ 1 պրոնզ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՍՕՏՕՐԷՆ ՄՊԱՓԷՆ ՌԵԱԼԻ ԽԱՂԱՑՈՂ ՊԻՏԻ ԴԱՆԱՅ

Ըստ սպանական «Մարքա» օրաթերթին, Ֆրանսայի Փարիզ Սան ժերմանի յարձակողական խաղացող Զիլիան Մպապիտէ յաջորդ շաբաթ պիտի ստորագրէ Ռեալ Մատրիտի միանալու պայմանագիրը: Տեղափոխութեան առնչութեամբ, պաշտօնական յայտարարութիւնը տեղի պիտի ունենայ մրցաշրջանի աւարտին: Մպապիտէ պիտի ստանայ 60 միլիոն եւրօ որպէս նուէր Արքայական ակումբը ընտրելուն համար: Անոր տարեկան աշխատավարձը պիտի ըլլայ 25 միլիոն եւրօ: Աւելցնենք, որ 2017 թուականէն ի վեր Մպապիտէ հանդէս կու գայ Փարիզ Սան ժերմանին հետ, իսկ անոր պայմանագիրը կ'աւարտի այս տարուան Յունիսին: Փարիզեան ակումբի ղեկավարութիւնը անոր առաջարկած է 50-100 միլիոն եւրօ աշխատավարձ՝ երկու տարիով եւս համագործակցութիւնը երկարաձգելու համար, սակայն Չեմփիընը Լիկէն դուրս մնալէ ետք, ֆրանսացի մարզիկը վերջնականապէս որոշած է հեռանալ ակումբէն:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 382)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Արամ Հայկազի երկերէն (երկու բառ):
- Քարուքանդ: Տարի: Տառի մը անունը:
- Որոշուած գին: Ստեղծագործ, ճարտար:
- Միջազգային կազմակերպութիւն մը: Յուցական դերանուն:
- Հողածուխ: Կարասի:
- 260: Նենգութիւն: Ժխտական պատասխան:
- Ցաւի ճիչ: Ծնօտ: Բուն, կոճղ:
- Տարուան եղանակներէն: Վահան Փափագեանի ծածկանունը:
- Ներքեւ: Հակառակ՝ լեզուով մը այո՛: Հակառակ՝ քէն: Ձայնանիշ:
- Աղբիւր: Ծրար, կապոց: Շաղկապ:
- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Մեծագոյն մեղքը գործած կ'ըլլան երիտասարդները, եթէ միշտ վերէն նային հիներուն վրայ եւ արհամարհեն անոնց փորձառութեան վաստակը»:
- Հանքային համեմ: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Ոչ հասուն:

Ուղղահայեաց

- Բարկութիւն, սրտմտութիւն: Ակոյա:
- Առաջին կինը: Յամառ:
- Ուղղութիւն ճշդորդ: Ոչ հասուն:
- Առարկայ: Տառի մը անունը:
- Չոհ, մարտիրոս: Ահաւոր:
- Շատակեր շրային թռչուն: Երգ:
- Աչք: Ծեփի գործածուող ճերմակ հանածոյ:
- Մշտափոփոխ: Իրերայաջորդ տառեր:
- Նոյնօրինակ: Ծուխ:
- Ռագմական օդանաւի մակնիշ: Հակառակ՝ ցուցական դերանուն:
- Ցաւի ճիչ:
- Հակառակ՝ կեռ, ճանկ: Հակառակ՝ անլուծելի:
- Վատանուն:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 381)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի
21/3



6° 12°

Երեքշաբթի
22/3



3° 13°

Չորեքշաբթի
23/3



4° 13°

Հինգշաբթի
24/3



5° 12°

Ուրբաթ
25/3



3° 13°

Շաբաթ
26/3



4° 15°

Կիրակի
27/3



6° 16°

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԻՐ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԵՐԷ «ԵԿԵՂԵՑԻՆ ՍԻՐՈՅ ՏՈՒՆ» ԽՈՐԱԳԻՐԸ ԿՐՈՂ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, Դամասկոսի մէջ իր մասնակցութիւնը կը բերէ «Եկեղեցին Սիրոյ Տուն» խորագիրը կրող եկեղեցական-միջազգային ժողովին, որ իր տարողութեամբ առաջինն է Սուրիոյ մէջ:

Ժողովը կազմակերպուած է Կաթողիկէ եկեղեցիներու Խորհուրդին կողմէ եւ անոր նախագահ՝ Յոյն Կաթողիկէ եկեղեցւոյ Եուսէֆ Ալ Ապսի Պատրիարքին:

Համագումարին բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 15 Մարտ 2022-ի առաւօտուն, ներկայութեամբ՝ Սուրիոյ Կրօնական Կալուածներու Նախարար դոկտ. Մուհամմէտ Ապտուլ Սաթթար Ալսեյիտին, Արեւելքի մէջ Կաթողիկէ եկեղեցիներու համախմբումի նախագահ կարտինալ Լիոնարտ Սանտրիին, Սուրիոյ մէջ Պապական Նուիրակ կարտինալ Մարիօ Չենարիին, քրիստոնեայ Բողեւոր Պետերու, միջազգային մարդասիրական յիսուն կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ պաշտօնական անձնաւորութիւններու:



Յիշենք, որ համագումարը տեղի կ'ունենայ երեք օրերու տեւողութեամբ եւ կը ձգտի միասնական ճիգով տկարներուն օգտակար դառնալ՝ առանց կրօնքի, համայնքի եւ դաւանանքի խտրութեան, տնտեսական ներկայ շրջափակումէն դուրս գալ, ինչպէս նաեւ սուրիական հայրենիքէն ներս քրիստոնեայ տարրին ներկայութիւնը ամրագրել:

Սրբազան Հայրը առիթ ունեցաւ տեսակցելու կարտինալներուն, պատրիարքներուն, Սուրիոյ զանազան շրջաններէն ժամանած հոգեւոր պետերուն, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւններու պատասխանատուներուն հետ:

ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ «ՊԱՇՏՆՈՒԹԻՒՆԸ ՀՐԱԷՐ ԱՊԱՇՏՆԱՐՈՒԹԵԱՆ» ԽՈՐԱԳԻՐՈՎ ԸՆԴԵԿԱՆ ՂԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԱՏՈՒՅԵՑ

ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան Դաստիարակչական Յանձնախումբին նախաձեռնութեամբ, Երեքշաբթի, 8 Մարտ 2022-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ «Պաշտօնողութիւնը Հրաւեր Ապաշխարութեան» խորագրով դասախօսական ձեռնարկ մը, որուն բանախօսն էր՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:



Ձեռնարկի բացման խօսքը արտասանեց յանձնախումբի ատենապետուհի Հուրի Եպիփանիան-Մաղաբեան, որ ողջունելէ ետք ներկաները, հակիրճ անդրադարձ մը կատարեց օրուան նիւթին՝ մէջբերելով ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին հետեւեալ խօսքը. «Մեծ Պահքը մեզ կը մղէ ինքնաքննութեան եւ ինքնասրբագրումի հոգեւոր եւ բարոյական իմաստով: Ան մեզ կը հրաւիրէ, որպէս անառակ որդիներ, դառնալու մեր Երկնաւոր Դօր»:

Այնուհետեւ ան հրաւիրեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը՝ ներկայացնելու օրուան շահեկան դասախօսութիւնը:

Սրբազան հայրը մանրամասնութեամբ եւ վերլուծական խորութեամբ բանախօսեց «Պաշտօնողութիւնը Հրաւեր Ապաշխարութեան» նիւթին շուրջ:

Գերշ. Ս. Մասիս մեկնաբանեց Յովհաննէս Մկրտիչի անդրադարձը Նոր Կտակարանին մէջ, դիտել տալով, որ ան առաջինն էր, որ ապաշխարութեան մասին ըսաւ այն, ինչ որ Յիսուս Զրիստոս ըսաւ:

Ապա ան մէջբերելով Պօղոս առաքեալին հետեւեալ խօսքը. «Ապաշխարեցէ՛ք եւ Աստուծոյ դարձէ՛ք, որպէսզի ձեր մեղքերը ջնջէ» (Գրծ 3. 19), յայտնեց, թէ պէտք չէ յետաձգել ապաշխարութիւնը, այլ՝ Աւետարան կարդալով, խոստովանելով եւ ապաշխարութեամբ պետք է մեր հոգիները բուժենք եւ Աստուծոյ վերադառնանք:

Բնութագրելով ապաշխարող հաւատացեալը, Մասիս Եպիսկոպոս յայտնեց, թէ այն խոնարհ մարդն է, որ իր սերը կ'արտայայտէ գործով եւ ո՛չ թէ խօսքով: «Ան, որ կ'ըսէ, թէ կը սիրեմ գ Աստուած եւ չի պահեր պատուիրանները՝ սուտ է, իսկ սատանան սուտերու հայրն է», աւելցուց ան:

Առաջնորդ սրբազան հայրը դասախօսութիւնը եզրափակեց ըսելով. «Մեր հոգեւոր գէնքը Աւետարանն է, արօթքն է: Սիրենք զիրար, որովհետեւ քրիստոնէութիւնը հիմնուած է սիրոյ վրայ»:

Հուսկ, Առաջնորդ Սրբազան Հայրը բարձր գնահատեց ՍՕԽ-ի Շրջ. Վարչութեան Դաստիարակչական Յանձնախումբին ծաւալած կրթադաստիարակչական գործունեութիւնը եւ նորանոր յաջողութիւններու, ձեռքբերումներու հեռանկարներ ուրուագծեց:

19 ՄԱՐՏ 1965-Ը ՀԱՆՔԻ ՀՄԸՄ-Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԲԱՆՏՈՐՈՇ ԹՈՒԿԱՆ ՄԸ ԵՂԱՒ

(Ե.)

Ճորճ Ռասսոկէլէեան

ՀՄԸՄ-ի ֆութպոլի խումբը 1964-1965 եղանակի Սուրիոյ ախոյեանութեան «Մումթազ» դասակարգի դարձի մրցումին պիտի ճակատէր սուրիական բանակի՝ «Ճէյշ»-ի գօրաւոր կազմին դէմ, Դամասկոսի մէջ:

Յաղթող խումբը պիտի հռչակուէր Սուրիոյ Արաբական Հանրապետութեան «Մումթազ» դասակարգի առաջին ախոյեան:

Ճակատագրական այս մրցումը մեզի համար կենաց մահու հարց էր: ՀՄԸՄ-ը ոչ միայն պիտի շահէր ախոյեանութեան տիտղոսը, այլեւ պիտի բարձրացնէր բոլորին տրամադրութիւնը, որուն այնքան կարիքը կար այդ օրերուն:

Երթի մրցումին (1-0) արդիւնքով կարեւոր առաւելութիւն մը ձեռք ձգած էինք, սակայն դարձի այս մրցումի առաջին կիսախաղին պատահեցաւ անսպասելի: Հակառակ ՀՄԸՄ-ի տղոց թափած ճիգին եւ բարձրորակ խաղարկութեան, «Ճէյշ» խումբը յաջողեցաւ յառաջանալ եւ վտանգել ՀՄԸՄ-ի բերդը: Այդուհանդերձ, շնորհիւ ՀՄԸՄ-ի արթուն, խոհեմ բերդապահին՝ եղբ. Անդրանիկ Սիւլիքճեանին եւ յետսպասի գիծի կայտառ տղոց, բանակի խումբին յաջողական յարձակումները ձախողութեան դատապարտուեցան: Միջազգային իրաւարար Սալէմ Ալմաշի «Ճէյշ»-ին շնորհած տուգանային հարուածը բարեբախտաբար կրցաւ զսպել մեր անզուգական բերդապահ եղբայրը եւ փրկել կացութիւնը: Սակայն բանակի խումբը շնորհիւ իր վարպետ խաղացող Թարեք Ալլուշի, յաջողեցաւ նշանակել մրցումի առաջին կողմ՝ Ա. կիսախաղի վերջին վայրկեանին: Արդիւնքը եղաւ (1-0), ի նպաստ բանակի խումբին:



Կացութիւնը լուրջ ու մտահոգիչ դարձաւ:

Ա. կիսախաղի դադարին, խումբի մարզիչ, պատասխանատու եղբայր Աբրահամ Աւընեան անհրաժեշտ թելադրանքը տուաւ եւ տղոց յուսադրիչ խօսքեր ուղղեց:

Բ. կիսախաղին ՀՄԸՄ-ի խիզախ տղաքը դաշտ ներկայացան բոլորովին տարբեր վիճակով՝ ոգեւորուած, խանդավառ եւ վճռականօրէն շարունակելու կենաց մահու ճակատամարտը եւ յաղթանակ կերտելու:

Անոնք անսպասելի յարձակումներով անակնկալի բերին իրենց մրցակիցը եւ լուրջ դժուարութեան մատնեցին զայն: Յատկապէս միջնապահ եւ յառաջապահ գիծերու ներդաշնակ խաղարկութիւնը եւ խաղացողներու գործակցութիւնը նուաճեցին մրցակիցին պարիսպները:

Վերջապէս տղոց, տքնաջան խաղը տուաւ իր արդիւնքը: Մրցումին 20-րդ վայրկեանին, Մորիս Ֆաքըս յաջողեցաւ մեծ վարպետութեամբ 30 մեթր հեռաւորութենէն ազատ հարուածի գնդակը հասցնել իր թիրախին եւ ցնցել բանակին բերդը: Արդիւնքը եղաւ (1-1):

ՀՄԸՄ-ականներն ու համակիրները թնդացուցին դաշտը: Ազգային յեղափոխական երգերը կը հնչէին ուժգին կերպով, «Յառաջ անսասան, յառաջ անվեհեր, դէպի յաղթանակ» քայլերգի կշռոյթին հետ մեր տղաքը մեկական առիծի վերածուած կը շարունակէին իրենց բացառիկ երթը՝ լրիւ տիրապետելով մրցումին եւ դաշտին:

Մրցակից խումբը յուսալքումի նշաններ ցոյց տուաւ:

Վերջապէս լուեցաւ միջազգային իրաւար Սալէմ Ալմաշի սուլիչին ձայնը, որ ազդանշանը տուաւ մրցումի ավարտին եւ անտեղ ՀՄԸՄ-ի յաղթանակը:

ՀՄԸՄ-ի անզուգական խումբը երթի ու դարձի գոյգ մրցումներուն ապահովեց 3 կէտ, իսկ «Ճէյշ» խումբը՝ 1 կէտ:

Այսպիսով ՀՄԸՄ-ը դարձաւ Սուրիական Արաբական Հանրապետութեան «Մումթազ» դասակարգի առաջին ախոյեան եւ արժանավայել կերպով բազմեցաւ 1964-1965 ֆութպոլի եղանակի առաջին ախոյեանութեան գահին:

Ձերմ գնահատանքս կը յայտնեմ ախոյեան խումբի եղբայրներուս, որոնք ամէն բանէ վեր դասեցին ՀՄԸՄ-ի ընդհանրական շահը, իրենց ամէնօրեայ մտահոգութեանց առանցքը դարձուցին ՀՄԸՄ-ի համբաւը եւ անոր փառաւոր յաղթանակներուն բերին իրենց ներդրումը:

Ծանօթ. : Լուսանկարը կը ներկայացնէ ՀՄԸՄ-ի յառաջապահ գիծի խաղացող, հանգուցեալ Մորիս Ֆաքըս՝ բռնած ախոյեանութեան բաժակը: